ԿՈԼՈՌԵԿՏԱԼ ՔԱՂՑԿԵՂԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԲԻՈՄԱՐԿԵՐՆԵՐ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ամփոփում

Նպատակ

Ուղեցույցի նպատակն էգրականության ամփոփ վերլուծության արդյունքում ստեղծել ապացուցողական բժշկության վրա հիմնված ուղեցույց, հաստատելու համար կոլոռեկտալ քաղցկեղի (ԿՌՔ) հյուսվածքի ստանդարտ մոլեկուլային բիոմարկերների թեստավորումը էպիդերմալ աճի գործոնի ռեցեպտորային (ԷԱԳՌ) բուժման և սովորական քիմիոթերապևտիկ ռեժիմի ուղղորդման նպատակով:

Մեթոդաբանություն

ՍույնուղեցույցըմշակվելէՀիստոջենպաթոլոգիայիհայ-գերմանական գիտագործնական կենտրոնի,ԵՊԲՀ կլինիկական պաթոլոգիայի լաբորատորիայի, ″Իզմիրլյան″ բժշկական կենտրոնի պաթոլոգների կողմից: Ուղեցույցիհիմնականգրականականաղբյուրէհանդիսացել **Կլինիկական պաթոլոգիայի Ամերիկյան կազմակերպության** (American Society for Clinical Pathology), Ամերիկյանպաթոլոգներիքոլեջի(College of American Pathologists), **Մոլեկուլային պաթոլոգիայի Ասոցիացիայի** (Association for Molecular Pathology) **և Կլինիկական ուռուցքաբանության Ամերիկյան կազմակերպության** (American Society of Clinical Oncology) կողմիցստեղծված«Կոլոռեկտալ քաղցկեղի մոլեկուլային բիոմարկերներ»կլինիկականուղեցույցը, ինչպեսնաև MEDLINE, PubMed, Cochrane library **և** UpToDateշտեմարաններիարդիտվյալները: ՏեղեկատվությանորակըգնահատելիսևցուցումներիուժըորոշելիսսկզբնաղբյուրհանդիսացողփաստաթղթումհիմքէընդունվելՑուցումներիուսումնասիրման, ստեղծմանևգնահատմանդասակարգմանհամակարգը (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation, GRADE): Ուղեցույցի տեղայնացման գործընթացը իրականացվել է համաձայն միջազգային ADAPTE մեթոդաբանության: Սույն փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումներիև/կամխմբագրման յուրաքանչյուր 5տարին մեկ կամ ավելի հաճախակի՝կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ

գալուց: Ուղեցույցընախատեսվածէ**շահագրգիռ կողմերի լայն շրջանակի համար**, **ներառյալ ուռուցքաբաններ**, **պաթոլոգներ**, **գաստրոէնտերոլոգներ**, **բուժքույրեր**, **հիվանդանոցային և լաբորատոր ադմինիստրատորներ**, **որակի կառավարիչներ**, **պացիենտների շահերը պաշտպանող խմբեր**, **հիվանդներ**, **նրանց ընտանիքները և խնամակալները**:

Արդյունքներ

Հաստատվել են ուղեցույցի քսանմեկ հայտարարություններ:

Հետևություններ

Ապացուցողականությունը պաշտպանում է ԷԱԳՌ ազդանշանային գեների մուտացիոնալ թեստավորումը, քանի որ դրանք ապահովում են որպես բացասական կանխատեսիչներ կլինիկորեն օգտավետտեղեկատվության ստացումը, կիրառելու համար հակա-ԷԱԳՌ մոնոկլոնալ հակամարմնային բուժումը որպես ԿՌՔ թիրախային բուժում: Որոշ բիոմարկերների մուտացիաներ ունեն հստակ կանխորոշիչ արժեք: Ներկայացված են լաբորատոր մոտեցումներ, ԿՌՔ մոլեկուլային թեստավորման գործարկման համար[153]:

Բանալի բառեր

Ապացուցողական բժշկություն, **ցուցումների ուսումնասիրման**, **ստեղծման և գնահատման դասակարգման համակարգ**, **պաթոլոգիա**, **կոլոռեկտալ քաղցկեղ**, **մոլեկուլային թեստավորում**, **նպատակային բուժում**, **էպիդերմալաճիգործոնիռեցեպտոր**:

Պատասխանատու համակարգող

Խաչատրյան Փ. Ս. բ.գ.թ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկականհամալսարանի «Հերացի» հիվանդանոցային համալիրի «Կլինիկական պաթոլոգիայի» լաբորատորիայի ղեկավար, «Ախտաբանական անատոմիայի և կլինիկական մորֆոլոգիայի» ամբիոնի դասախոս, «Հիստոջեն» պաթոլոգիայի հայ-գերմանական գիտագործնական կենտրոնի պաթոլոգ:

Աշխատանքային խումբ

- Մխիթարյան Ա. Գ. բ.գ.թ., Երևանի«Սուրբ Աստվածամայր» ԲԿ-ի «Ախտաբանական անատոմիայի» բաժանմունքի ղեկավար,«Հիստոջեն» պաթոլոգիայի հայ-գերմանական գիտագործնական կենտրոնի պաթոլոգ:
- Հակոբյան Գ. Ա. բ.գ.թ., ԵրևանիՄխիթարՀերացուանվանպետականբժշկական համալսարանի «Հերացի» հիվանդանոցային համալիրի «Կլինիկական պաթոլոգիայի» լաբորատորիայի բժիշկ-պաթոլոգ, «Ախտաբանական անատոմիայի և կլինիկական մորֆոլոգիայի» ամբիոնի դասախոս:
- Մանուկյան Է. Վ. բ.գ.թ., "Իզմիրլյան բժշկական կենտրոնի պաթոլոգիայի լաբորատորիայի ղեկավար

Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Պատասխանատու համակարգողը հայտարարում է շահերի բախման բացակայության վերաբերյալ:

Շնորհակալական խոսք

Հեղինակը իր երախտագիտությունն է հայտնում սույն ուղեցույցի մշակման աշխատանքներին իրենց աջակցությունը, խորհրդատվությունը և մասնագիտական գիտելիքները տրամադրած գործընկերներին:

Բովանդակություն

Նախաբան

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Առանցքային հարց

Ուղեցույցի հայտարարություններ

Սահմանափակումներ

Ուղեցույցի ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ

Գրականության ցանկ

Հավելված

Հապավումներ

ԱՋԱ – Առաջընթացից զերծ ապրելունակություն

ԷԱԳՌ - Էպիդերմալ աճի գործոնի ռեցեպտոր

ԸԱ – ընդհանուր ապրելունակություն

ԻՀՔ - իմունահիստոքիմիա

ԿՌՔ – կոլոռեկտալ քաղցկեղ

ՖՖՊԼ - Ֆորմալինում ֆիքսված և պարաֆինում լցոնված

ՄՍԱ (MSI) – Միկրոսատելիտային անբավարարություն

ASCP (American Society for Clinical Pathology)՝ Կլինիկական պաթոլոգիայի Ամերիկյան կազմակերպություն

AMP (Association for Molecular Pathology)՝ Մոլեկուլային պաթոլոգիայի Ասոցիացիա

ASCO (American Society of Clinical Oncology)՝ Կլինիկական ուռուցքաբանության Ամերիկյան կազմակերպություն

CAP (College of American Pathologists)՝Ամերիկյանպաթոլոգներիքոլեջ

FISH - Fluorescence in situ hybridization

PIC3 - ֆոսֆատիդիլինոզիտոլ-3-կինազա

Նախաբան

Կոլոռեկտալ քաղցկեղով պացիենտների նպատակային կամ սովորական բուժման մեթոդի ընտրության համար մոլեկուլային թեստավորումը գտնվում է ուշադրության կենտրոնում և դարձել է ԿՌՔ քաղցկեղով պացիենտների վարման ստանդարտ գործառույթ: Մոլեկուլային մարկերները, որոնք կանխորոշում են պատասխանը թիրախային բուժմանը կամ սովորական ռեժիմին, ճանաչված են որպես կանխորոշիչ բիոմարկերներ [1]: Մոնոկլոնալ հակամարմնային բուժումը, որը

թիրախավորում է ԷԱԳՌ-ը, կապում է ԷԱԳՌ-ի արտաբջջային դոմենը, արգելակում ԷԱԳՌ-ի ազդանշանային ախտաբանական ուղին: ԿՌՔ նպատակային բուժման համար հակա-ԷԱԳՌ մոնոկլոնալ հակամարմինների կիրառումը հիմնական է, որը պահանջում է գեների մոլեկուլային կարգավիճակի իմացություն, որպես կանխորոշիչ բիոմարկերներ բուժման պատասխանի համար [2-4]: Նախնական կլինիկական փորձարկման տվյալները ցույց են տվել, որ ԿՌՔ-ով պացիենտների մոտ գործում են KRAS-ի ակտիվացած մուտացիաներ, որոնք ազդում են էկզոն 2-ի 12-րդ և 13-րդ կոդոնների վրա, և հակա-ԷԱԳՌ մոնոկլոնալ հակամարմնային թերապիան օգուտ չի տալիս [2-4]:Հետագա ուսումնասիրություններում նկարագրված են ԷԱԳՌ–ի ազդանշանային ուղու գեների այլ մուտացիաներ, որոնք ներառում են KRAS- ի եւ NRAS-ի այլ էկզոններ՝ BRAF, PIK3CA եւ PTEN- ը, որոնք կարող են ազդել ԿՌՔ-ի արձագանքի վրա հակա-ԷԱԳՌ հակամարմնային բուժման վրա: Ուղեցույցներ, որոնք կվերաբերվեն KRAS-ի սահմաններից դուրս ԷԱԳՌ ուղիների գեների մոլեկուլային փորձարկումներին չեն հաստատվել, բայց անհրաժեշտ են կլինիկական պրակտիկայում:

ԿՌՔ-ի ժամանակ ԴՆԹ-ի անհամապատասխան նորոգման (MMR) կարգավիճակը կարող է կանխատեսիչ արժեք ունենալ որոշ կլինիկական պարամետրերում: ԿՌՔ-ի ժամանակ MMR թեստավորումը առաջարկվել է բոլոր պացիենտների համար որպես հուսալի թեստ, գնահատելու հնարավոր Lynch-ի համախտանիշը [5], ուղեցույցներ, որոնցումMMR-ի օգտագործումը որպես բուժմանն արձագանքման կանխատեսիչ բիոմարկեր չի հայտնաբերվել:Վերջին մոլեկուլային բիոմարկերների տվյալները ցույց տվեցին միկրոսատելիտային անկայունության (MSI) թեստավորման կարևորությունը որպես անբավարար անհամապատասխանության նորոգում (dMMR)իմունոթերապիայի պացիենտներին ընտրելու համար:

ԿՌՔ-ի զարգացմանևառաջընթացի համար մի շարք կրիտիկական գեներիփոփոխությունները, ինչպիսիք են dMMR- ըև BRAF-ը ակտիվացնողմուտացիաներըազդում են կանխատեսմանվրա, որը չափվումէուռուցքիառաջացման և ապրելունակության միքանիչափանիշներով [6-8]:

Այս և մի շարք այլ հանգամանքներ հաշվի առնելով անհրաժեշտ է ունենալ ապացուցողականության վրա հիմնված հայտարարություններ ԿՌՔ-ի հյուսվածքի մոլեկուլային թեստավորման նպատակովթիրախային հակա-ԷԱԳՌ կամ սովորական քիմիաթերապիայի համար:

ՀայաստանիՀանրապետությունումԿՌՔ-ըբավականինտարածվածէ: 2015թ. ՀՀ-ումգրանցվելէառաջնակիհայտնաբերվածկոլոռեկտալքաղցկեղի 270 դեպքկանանց, և 264 դեպքտղամարդկանցշրջանում: Ուռուցքային հյուսվածքի մոլեկուլային թեստավորում կատարվում է ըստ բուժող բժշկի հայեցողության:

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Ուղեցույցը մշակվել է «Հիստոջեն»պաթոլոգիայիհայ-գերմանական գիտագործնականկենտրոնիևԵՊԲՀ«Կլինիկականպաթոլոգիայի»լաբորատորիայի և «Իզմիրլյան» ԲԿ-իպաթոլոգներիկողմից: Տեղեկատվության հավաքագրման մարտավարությունը ընդգրկել է բանալի բառերի օգնությամբ իրականացվող բազմաբնագավառ որոնում MEDLINE, PubMed, Cochrane library, National Guideline Clearinghouse **և** UpToDate շտեմարաններում: Փաստաթղթերի նկատմամբ կիրառվել են հետևյալ տեսակավորման ցուցանիշները՝ ապացուցողական բնույթ (համակարգված ամփոփ տեսություն, ցանկացած խոհուրդի վերաբերյալ հստակ հղումների առկայություն, ապացույցերի ուժի և որակի գնահատականներ և այլ), ազգային կամ համաշխարհային ամփոփումների կարգավիճակ, անգլերեն լեզու: Ուղեցույցի հիմնական գրականական աղբյուրներն են հանդիսացել **Կլինիկական պաթոլոգիայի Ամերիկյան կազմակերպության** (ASCP), **Ամերիկյան պաթոլոգների քոլեջի** (CAP), **Մոլեկուլային պաթոլոգիայի Ասոցիացիայի** (AMP) **և Կլինիկական ուռուցքաբանության Ամերիկյան կազմակերպության** (ASCO) կողմից 2017թ-ին ստեղծված «Կոլոռեկտալ քաղցկեղի գնահատման մոլեկուլային

բիոմարկերներ»կլինիկականուղեցույցը(Molecular biomarkers for the evaluation of colorectal cancer: Guideline summary from the American Society for Clinical Pathology, College of American Pathologists, Association for Molecular Pathology, and American Society of Clinical Oncology): Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիսASCP/CAP/ASCO/AMP հեղինակած փաստաթղթում հիմք է ընդունվել ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգը (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation – GRADE): Ապացույցների դասակարգման մեթոդաբանության մանրամասները՝ տեսհավելվածներ:

«Հիստոջեն»պաթոլոգիայի հայ-գերմանական գիտագործնական կենտրոնը տեղայնացման/ադապտացիայի աշխատանքներն իրականացրել է ըստ ADAPTE մեթոդաբանության՝աշխատանքային խմբի անդամների առերես հանդիպումների և հեռահարշփումների միջոցով: Ուղեցույցի բոլոր դրույթների վերաբերյալ ապահովվել է աշխատանքային խմբի անդամների կոնսենսուս: Սույն փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և /կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտգալուց: Ուղեցույցը նախատեսված է **ուռուցքաբանների**, **պաթոլոգների**, **գաստրոէնտերոլոգների**, **բուժքույրերի**, **հիվանդանոցային և լաբորատոր ադմինիստրատորների**, **որակի կառավարիչների**, **պացիենտների շահերը պաշտպանող խմբեր**, **պացիենտների**, **նրանց ընտանիքների և խնամակալների համար**:

Առանցքային հարցեր

Ուղեցույցի մշակման ընթացքում փորձագետներին առաջադրված ընդհանուր հարցերն էին.

1. Ո՞ր բիոմարկերներն են օգտակար թիրախային և սովորական բուժումների համարկոլոռեկտալ քաղցկեղով (ԿՌՔ) պացիենտներինընտրելու առումով:

2. Ինչպե՞ս պետ է մշակվեն հյուսվածքային նմուշները ԿՌՔ վարման բիոմարկերների թեստավորման համար:
3. Ինչպե՞ս պետք է իրականացվի բիոմարկերների թեստավորումը ԿՌՔ վարման համար:
4. Ինչպե՞ս պետք է ներդրվի և գործարկվի ԿՌՔ բիոմարկերների թեստավորումը:
5. Կա՞ն արդյոք նոր գեներ/բիոմարկերներ, որոնք պետք է մշտապես թեստավորվեն ԿՌՔ դեպքում:

ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. **Խորհուրդ – Կոլոռեկտալ քաղցկեղով այն պացիենտները**, **ում նախատեսվում է անցկացնել հակա-ԷԱԳՌ բուժում**, **պետք է անցնեն** RAS **մուտացիոնալ թեստավորում**: **Մուտացիոնալ անալիզը պետք է ընդգրկի** KRAS **և** NRAS 2-**րդ էկզոնի** 12 **և** 13 **կոդոնները**, 3-**րդ էկզոնի՝** 59 **և** 61, 4-**րդ-ի՝** 117 **և** 146 **(ընդլայնված** RAS) - ***աղյուսակ*** *1*:

ԿՌՔ-ի ԷԱԳՌ-ի ազդանշանային ախտաբանական ուղու աբերանտ ակտիվացումը նախ և առաջ կապված է միտոգեն-ակտիվացած պրոտեինկինազային և ֆոսֆատիդիլինոզիտոլ-3-կինազային (PIC3) ախտաբանական ուղիներում գենային մուտացիաներիակտիվացումով: ԿՌՔ-ի բոլոր դեպքերի մոտավորապես կեսում դիտվում է KRAS, NRAS և BRAF համատեղ մուտացիաներ, KRAS-ը կամ NRAS-ը հակադարձ կապված են BRAFմուտացիայի հետ, և միայն շատ քիչ մասն է ԿՌՔ-ի RAS և RAF համադրությամբ [3, 12]:

Ցետուքսիմաբը և պանիտումումաբը այն հակամարմիններն են, որոնք կապում են ԷԱԳՌ-ի արտաբջջային դոմենը, արգելակում էպիդերմալ աճի գործոնի և ԷԱԳՌ-ի այլ էնդոգեն լիգանդների կապումը, դրանով իսկ կանխելով ԷԱԳՌ-ի ազդանշանը: Նախկինում արված ուսումնասիրությունները հրատարակում էին հակա-ԷԱԳՌ բուժման արդյունավետությունը անկախ KRAS կարգավիճակից [13-16]: Հետագայում ցույց

տրվեց, որ ցետուքսիմաբով և պանիտումումաբով թիրախային բուժումը բարելավում է առաջընթացից զուրկ և ընդհանուր ապրելունակությունը մետաստատիկ ԿՈՔ-ով և անզուսպ տիպի KRAS-ով պացիենտների մոտ, բայց ոչ մուտացված KRAS-ով հիվնադների մոտ [2, 3, 17]:

***Աղյուսակ** 1.*

Ուղեցույցի հայտարարությունները և խորհուրդների ուժը

	Ուղեցույցի հայտարարությունը	**Խորհրդատվության ուժը**
1.	Կոլոռեկտալ քաղցկեղով պացիենտները, ում նախատեսվում է անցկացնել հակա-EGFR բուժում, պետք է անցնեն RAS մուտացիոնալ թեստավորում: Մուտացիոնալ անալիզը պետք է ներառի KRAS և NRAS էկզոն 2-ի 12, 13 կոդոնները, էկզոն 3-ի 59 և 61, էկզոն 4-ի 117 և 146 (ընդլայնված RAS)	Խորհուրդ է տրվում
2ա.	Կոլոռեկտալքաղցկեղայինհյուսվածքումպետքէկատարվի*BRAF*p.V600 (*BRAF*c.1799 [p.V600])մուտացիոնալանալիզը՝կոլոռեկտալքաղցկեղովպացիենտներիկանխատեսմանստրատիֆիկացիայիհամար:	Խորհուրդ է տրվում
2բ.	*BRAF*p.V600անալիզըպետքէկատարվիMLH1-իկորուստովMMRանբավարարուռուցքներում, գնահատելուհամարԼինչիհամախտանիշիռիսկը: BRAFմուտացիայիառկայությունըխիստնպաստումէսպորադիկպաթոգենեզին: BRAFմուտացիայիբացակայությունըչիբացառումԼինչիհամախտանիշիռիսկը:	Խորհուրդ է տրվում
3.	Կլինիցիստներըպետքէկոլոռեկտալքաղցկեղովպացիենտներիշրջանումպատվիրենանհամապատասխանվերականգնմանկարգավիճակիթեստավորում, հայտնաբերելուհամարԼինչիհամախտանիշիբարձրռիսկովպացիենտներինև/կամ կանխատեսմանստրատիֆիկացիայիհամար:	Խորհուրդ է տրվում
4.	Չկաբավարարապացուցողականությունխորհուրդտալու*BRAF*c.1799 (p.V600) մուտացիոնալկարգավիճակըորպեսկանխորոշիչմոլեկուլյարբիոմարկերհակա-ԷԱԳՌինհիբիտորայինբուժմանպատասխանի:	Խորհուրդ չի տրվում
5	ՉկաբավարարապացուցողականությունխորհուրդտալուPIK3CAմուտացիոն	Խորհու

.	ալանալիզըկոլոռեկտալքաղցկեղայինհյուսվածքումկլինիկականփորձարկումիցդուրսբուժմանընտրությանհամար: Ծանուցում. Ռետրոսպեկտիվհետազոտություններընթադրումէինասպիրինիհետվիրահատականօգտագործմամբբարելավվածապրելունակությունայնպացիենտներիմոտ, ումկոլոռեկտալքաղցկեղնունիPIK3CAմուտացիա:	ոդ չի տրվում
6.	ՉկաբավարարապացուցողականությունխորհուրդտալուPTENանալիզ*[էքսպրեսիա իմունահիստոքիմիայով (ԻՀՔ) կամդելեցիաinsituֆլյուորեսցենտայինհիբրիդիզացիայով (FISH)]*այնպացիենտներիկոլոռեկտալքաղցկեղիհյուսվածքում, ովքերնախատեսվածէինկլինիկականփորձարկումիցդուրսբուժմանընտրությանհամար:	Խորհուրդ չի տրվում
7.	Մետաստատիկ կամ կրկնված կոլոռեկտալ քաղցկեղային հյուսվածքները գերադասելի նմուշներ են բուժման կանխատեսիչ մարկերների թեստավորման համար և պետք է օգտագործվեն, եթե այդպիսի նմուշներ կան և բավարար են: Դրանց բացակայության ժամանակ առաջնային ուռուցքային հյուսվածքը հանդիսանում է ընդունելի այլընտրանք և պետք է օգտագործվի:	Փորձագիտական հանձնաժողովի կարծիք
8.	Ֆորմալինումֆիքսված, պարաֆինումլցոնվածհյուսվածքներըընդունելինմուշներենկոլոռեկտալքաղցկեղիմոլեկուլայինբիոմարկերներիմուտացիոնալթեստավորմանհամար: Այլնմուշներիօգտագործումը (օր. բջջաբանականյութ) կպահանջիլրացուցիչբավարարհաստատում, ինչպեսցանկացածփոփոխությունհյուսվածքներիմշակմանգործելակարգում:	Փորձագիտական հանձնաժողովի կարծիք
9.	Լաբորատորիաներըպետքէօգտագործենկոլոռեկտալքաղցկեղիմոլեկուլայինբիոմարկերներիթեստավորմանհամարհաստատվածմեթոդներբավարարկատարողականբնութագրերով, ենթադրյալկլինիկականկիրառմանհամար:	Ուժեղ խորհրդատվություն
10.	Կոլոռեկտալքաղցկեղիմոլեկուլայինբիոմարկերներիթեստավորմանիրականացումըպետքէլինիվավերացվենլավագույնլաբորատորգործունեությանհամաձայն:	Ուժեղ խորհրդատվություն
11	Լաբորատորիաներըպետքէվավերացնենկոլոռեկտալքաղցկեղիմոլեկուլայինբիոմարկերների՝իմունահիստոքիմիականթեստավորմանեղանակովկատարումը	Ուժեղ խորհրդ

.	(ընթացիկMLH1, MSH2, MSH6 ևPMS2) լավագույնլաբորատորգործունեությանհամաձայն:	ատվություն
12.	Լաբորատորիաները պետք է ապահովեն կլինիկորեն համապատասխան շրջադարձային (պատասխանի տրման) ժամանակահատվածները և հյուսվածքային նմուշների օպտիմալ օգտագործումը, կիրառելով համապատասխան սարքավորումներ (օր. բազմակողմանի փորձարկումներ) կոլոռեկտալ քաղցկեղի՝ կլինիկորեն հարմար մոլեկուլային և իմունահիստոքիմիական բիոմարկերների համար:	Փորձագիտական հանձնաժողովի կարծիք
13.	Կոլոռեկտալ քաղցկեղի բիոմարկերների մոլեկուլայինև իմունահիստոքիմիական թեստավորումը պետք է վերանայվի ժամանակ առ ժամանակ, հիմնվելով կլինիկական պատկերի և ինստիտուցիոնալ ընդունված փորձարկումների վրա: Ծանուցում. Թեստի պատվիրումը կարող է լինել դեպքից դեպք կամ ըստ բուժանձնակազմի կողմից հաստատված քաղաքականության:	Փորձագիտական հանձնաժողովի կարծիք
14.	Լաբորատորիաները պետք է ներդնեն քաղաքականություն՝ ապահովելու համար հյուսվածքների արդյունավետ բաշխում և օգտագործում մոլեկուլային թեստավորման նպատակով, հատկապես փոքր նմուշների դեպքում:	Փորձագիտական հանձնաժողովի կարծիք
15.	Հիվանդի բժշկական թիմի անդամները, այդ թվում պաթոլոգը, կարող են նախաձեռնել կոլոռեկտալ քաղցկեղի բիոմարկերների մոլեկուլային թեստավորման կարգը ըստ ինստիտուցիոնալ ընդունված փորձարկումների:	Փորձագիտական հանձնաժողովի կարծիք
16.	Լաբորատորիաները, որոնց անհրաժեշտ է դուրս ուղարկել թեստերը բուժման կանխատեսիչ բիոմարկերների համար, պետք է կոլոտեկտալ քաղցկեղի նմուշները մշակեն և ուղարկեն ռեֆերենս մոլեկուլային լաբորատորիաներ ըստ ընդունված ժամանակացույցի: Ծանուցում. Ենթադրվում է, որ նմուշների 90%-ը պետք է ուղարկվի 3 աշխատանքային օրերի ընթացքում:	Փորձագիտական հանձնաժողովի կարծիք
17	Պաթոլոգը պետք է գնահատի մոլեկուլային թեստավորման համար հարմար նմուշը և վստահ լինի նյութի ադեկվատության մեջ, հաշվի առնելով հյուսվածքի որակը, քանակը, չարորակ ուռուցքային բջիջների չափաբաժինը: Նմուշի	Փորձագիտակ

.	բավարար լինելու մասին պետք է նշել հիվանդի ուղեգրում:	ան հանձն աժողով ի կարծիք
18.	Լաբորատորիաները պետք է օգտագործեն կոլոռեկտալ քաղցկեղի մոլեկուլային բիոմարկերների թեստավորման մեթոդները, որոնք կարող են հայտնաբերել մուտացիաները նմուշներում առնվազն 5% մուտանտ ալելների հաճախականությամբ, հաշվի առնելով փորձարկման վերլուծական զգայունությունը (սահմանափակ դետեկցիա) և ուռուցքի հարստացում (օր. միկրոհատումները): Ծանուցում. Խորհուրդ է տրվում ուռուցքային բջիջների նվազագույն քանակի դեպքում առնվազն երկու անգամ կրկնել թեստավորումը, հատկապես եթե առկա է դետեկցիայի սահմանափակում:	Փորձագ իտական հանձնա ժողովի կարծիք
19.	Կոլոռեկտալ քաղցկեղի բիոմարկերների մոլեկուլային թեստավորման արդյունքները պետք է հասանելի լինեն հնարավորինս անհապաղ, քանի որ անհրաժեշտ է ընդունել բուժման որոշումներ, ինչպես կանխատեսիչ, այնպես էլ կանխորոշիչ: Ծանուցում. Ենթադրվում է, որ արդյունքների 90% պետք է հասանելի լինի նյութը ստանալուց հետո 10 աշխատանքային օրերի ընթացքում:	Փորձագ իտական հանձնա ժողովի կարծիք
20.	Կոլոռեկտալ քաղցկեղի բիոմարկերների մոլեկուլային թեստավորման եզրակացությունները պետք է ներառեն արդյունքներ և մեկնաբանություններ, հեշտ հասկանալի ուռուցքաբանների և պաթոլոգների համար: ″Մարդու Գենոմային Վարիացիաների Միության և Մարդու Գենոմի Կազմակերպության համապատասխան դասակարգումները պետք է կիրառվեն այլ պատմական գենետիկ անվանումների հետ:	Փորձագ իտական հանձնա ժողովի կարծիք
21.	Լաբորատորիաները պետք է ներառեն կոլոռեկտալ քաղցկեղի մոլեկուլային բիոմարկերների թեստավորման մեթոդները իրենց լաբորատոր որակի բարելավմանծրագրի մեջ, ներդնելով համապատասխան որակի բարելավման մոնիտորինգ, վստահ լինելու համար՝ գործընթացի իրականացման բոլոր փուլերում կայունությանև եզրակացությունների հարցում:	Ուժեղ խորհրդ ատվութ յուն

	Մասնավորապես կոլոռեկտալ քաղցկեղի բիոմարկերների մոլեկուլայինթեստավորում իրականացնող լաբորատորիաները պետք է հնարավության դեպքում մասնակցեն մասնագիտական ունակության ծրագերի, կամ այլընտրանքային ունակությունների ապահովագրական գործունեության:	

Ապացուցողականության լայն ծավալը թույլ էր տալիս ուղղորդելու ԿՌՔ-ի RAS թեստավորումը որպես խորհուրդ տվյալ ուղեցույցում: 74.546 պացիենտների ընդգրկումով հետազոտությունը համեմատում էր հիվանդության ելքերը RAS մուտացիաներով և առանց մուտացիաներ/անզուսպ տիպերի հետ [12-16, 18-45]:Ամենահաճախ կատարված համեմատությունը հակա-ԷԱԳՌ բուժման ելքերի վերաբերյալ էր KRAS մուտացիաներով և առանց KRAS մուտացիաներ/անզուսպ տիպերի հետ [18-20, 22, 24-26, 28-31, 33-42], որոշ հետազոտություններ՝ նաև համեմատությամբ քիմիոթերապիայի ելքերի հետ [18, 22, 24, 26, 28, 36-38]: Մի քանի հետազոտություններ են կատարվել հակա-ԷԱԳՌ հակամարմնային բուժման համեմատություններով. KRAS G13D կոդոն 12-ի մուտացիաների [32], KRAS կոդոն 13-ի և այլ մուտացիաների [21], G13D էկզոն 2-ի այլ մուտզցիաների [23]:

Հակա-ԷԱԳՌ բուժման ելքերի հետազոտությունները միավորում էին ապրելունակությունը [13-16, 21-27, 29, 32-37, 39, 41], առաջընթացից զերծ ապրելունակությունը [13, 15, 16, 18, 21, 22, 25, 26, 30-36, 41],որոշ աշխատանքներում համեմատողների միջև եղել են լուրջ տարաձայնություններ [15, 21, 23-27, 32, 33, 35-37, 39]: Հայտնաբերվել է նաև առանց մուտացիաների ուռուցքներով պացիենտների մոտ հակա-ԷԱԳՌ բուժման արդյունավետությունը KRAS մուտացիայով պացիենտներին միայն քիմիաթերապիայով բուժման համեմատ [24, 26, 36]:

Գրականության վերլուծությամբ պարզվել է, որ մինչև հակա-ԷԱԳՌ բուժում սկսելը, պետք է կատարել ընդլայնված RAS մուտացիոն թեստավորում (KRAS էկզոն 2, 3 և 4, NRAS էկզոն 2, 3 և 4) [12]: Այս խորհուրդը աջակցություն է ստացել 34 հետազոտություններով [12-16, 18-45, 47] ներառյալ 29 համակարգային

վերլուծություններ [12, 13, 15, 16, 18-22, 24-42, 47], երկումետաանալիզ [14, 23], մեկ կույր վերահսկվող փորձարկում [44], մեկ պրոսպեկտիվ կոհորտ հետազոտություն [45] և մեկ պրոսպեկտիվ կոհորտ հետազոտություն [43]:

Ողջ ապացուցողականությունը, որն աջակցում էրայս առաջարկությանը գնահատվել է, և ոչ մեկում չեն եղել մեթոդաբանական թերությունները, որոնք մտահոգությունների տեղիք կտային:

2ա. Խորհուրդ –BRAF p V600 **պոզիցիոն դիրքային անալիզը պետք է կատարվի ընտրված պացիենտների ԿՌՔ-ով հյուսվածքներում կանխատեսիչ դասակարգման համար**:

BRAF ակտիվացնող մուտցիաները առաջանում են առաջընթաց ԿՌՔ-ով պացիենտների 8%-ի մոտ [47, 48] 7 և մոտավորապես 14% քաղցկեղի լոկալիզացված 2-րդ և 3-րդ փուլերում [8, 49]: Այսպիսով, BRAF- ի մուտացիաները կազմում են ԿՌՔ-ով պացիենտների էական ենթաբազմություն: BRAF մուտացիաների հետ կապված հիմնական հարցերն են.արդյո՞ք հիվանդները, որոնց քաղցկեղը ունի BRAF մուտացիա ունեն ավելի վատ ելք BRAF մուտացիայի բացակայությամբ դեպքերի համեմատությամբ և արդյո՞ք մուտացիայի առկայությունը կանխատեսում է օգուտ կամ արդյունքի բացակայություն հակա-ԷԱԳՌ բուժումից:

Անցկացվել են ԿՌՔ-ով պացիենտների մոտ BRAF մուտացիաների կանխատեսիչ և կանխորոշիչ արժեքին վերաբերվող չորս համակարգային հետազոտություններ [20, 50-52] և մետաանալիզ պարունակող երեք համակարգային հետազոտություններ [47, 48, 53]: Հետազոտությունները հայտնաբերել են, որ այն հիվանդները, որոնք ունեն BRAF մուտացիա, ունեն ավելի նշանակալի վատ ելք ԱՋԱ և ԸԱ առումով, և հակա-ԷԱԳՌ բուժմանը պատասխանի ցածր գործակից BRAF մուտացիա չունեցող պացիենտների համեմատ: Ավելի վատ ԸԱ է դիտվել նաև BRAF մուտացիայով պացիենտների մոտ ԿՌՔ-ի վաղ՝ 2-րդ և 3-րդ փուլերում [8, 54]: Վերջապես BRAF մուտացիաներով պացիենտների մոտ ելքը առանց մուտացիաներով պացիենտների համեմատ եղել է ավելի վատ, հակա-ԷԱԳՌ բուժման արդյունավետությունն ավելի ցածր է RAS

մուտացիներով պացիենտների համեմատ [55]: Այսպիսով, BRAF մուտացիաներով պացիենտների մոտ ելքը ավելի վատն է առանց մուտացիաների պացիենտների համեմատ: BRAF մուտացիաների թեստավորման համար ընտրված հիվանդները նրանք են, ովքեր ունեն մետաստատիկ ախտահարում, մասնավորապես վատ ելք: Կարևոր է իմանալ BRAF մուտացիոնալ կարգավիճակը մետաստատիկ ԿՌՔ-ով պացիենտների մոտ, քանի որ ստանդարտ բուժումն այս պարագայում անարդյունավետ է: Կան հետազոտություններ պացիենտների այս խմբում FOLFIRINOX (folinic acid [leucovorin calcium], 5-fluorouracil, irinotecan hydrochloride և oxaliplatin)՝ առաջնահերթ օգտագործման վերաբերյալ [56]: Բացի այդ, վաղ կլինիկական փորձարկումները ցույց են տալիս, որ BRAF մուտացիայի և հակա-ԷԱԳՌ բուժման համադրությունը կարող են արդյունավետ լինել տվյալ պացիենտների մոտ[57-59]:

2բ. – **Խորհուրդ** - BRAF pV 600**մուտացիոնալ անալիզ պետք է կատարվի** MLH1 **կորուստով** dMMR **ուռուցքներում՝ Լինչի համախտանիշի ռիսկը գնահատելու համար**:

BRAF **մուտացիայի առկայությունը խիստ մատնանշում է սպորդիկ պաթոգենեզը**:

BRAF **մուտացիայի բացակայությունը չի բացառում Լինչի համախտանիշի ռիսկը**:

dMMR առաջանում է տարբեր մեխանիզմներով: ԿՌՔ Լինչի համախտանիշի դեպքում մեխանիզմը սովորաբար անհամապատասխան վերականգումով չորս գեներից մեկի (MLH1, MSH2, MSH6, and PMS2) նախնական մուտացիան է, հազվադեպ՝ էպիթելային բջիջների ադհեզիոն մոլեկուլների դելեցիան, երբ MSH2 գենին հարակից գենը, որը հանգեցնում է վերջինիս էպիգենետիկ ինակտիվացիայի: dMMR տեղի է ունենում ԿՌՔ-ի15% -ից մինչև 20% դեպքերում, դրանց երեք-չորրորդը կապված են MLH1 էպիգենետիկ լռության հետ [5, 62]: dMMR-ը ընկած է գեների և MSI տարածված մուտացիաների հիմքում: BRAF pV600 մուտացիան հազվադեպ է առաջանում սաղմնագծային dMMR պացիենտների մոտ: Այն հիվանդները, որոնք ունեն մուտացիաներ միաժամանակ dMMR և BRAF, հավանաբար ունեն սաղմնագծային գենեզ [5, 52, 62]: Հակառակը, BRAF մուտացիայի բացակայությամբ և dMMR-ի առկայությամբ ուռուցքներում հիմքը

կարող է լինել սաղմնագծային կամ էպիգենետիկ, և MLH1 գերմեթիլացման սպեցիֆիկ թեստավորումը կարող է արդյունավետ լինել Լինչի համախտանիշի ռիսկի գնահատման համար, նախքան որոշակի գենետիկ թեստավորումը:

3. **Խորհուրդ – ԿՌՔ-ով պացիենտների մոտ կլինիցիստները պետք է պատվիրեն անհամապատասխան վերականգնման կարգավիճակի թեստավորում Լինչի համախտանիշի բարձր ռիսկով պացիենտների հայտնաբերման և կանխատեսիչ դասակարգման համար**:

MSI ուռուցքների մոլեկուլային պաթոլոգիայի հիմքում ընկած է սոմատիկորեն երկրորդային MLH1 գենի խթանիչի CpG մեթիլացումը: MLH1 խթանիչի գերմեթիլացումովMSI ԿՌՔ-ով պացիենտների ¾-ի մոտ կարող է հայտնաբերվել նաև երկրորդային BRAF մուտացիա:Վերջինիս մեխանիզմը անհասկանալի է: dMMR/MSI ԿՌՔ-ով պացիենտների 1/3-ից քիչ դեպքերում MLH1 խթանիչի գերմեթիլացում չի դիտվում, սակայն կարող է դիտվել սաղմնագծային վնասում ԴՆԹ-ի MMR գեներից որևէ մեկում: MMR գեների սաղմնագծային մուտացիաներով հիվանդները հակված են Լինչի համախտանիշի, այն դիտարկվում է որպես աուտոսոմ դոմինանտ խանգարում, որը խիստ բարձրացնում է ԿՌՔ-ի և էնդոմետրիալ քաղցկեղի ռիսկը, և հարաբերականորեն բարձրացնում այլ չարորակ ախտահարումների ռիսկը [63]:Լինչ համախտանիշի ախտորոշումը կարևորվում է քաղցկեղի ռիսկի ակտիվ վարման [5, 64, 65] և բոլոր այլ հնարավոր ռիսկերի կանխարգելման հնարավորությունների հաստատման համար: dMMR թեստավորումը կարող է կատարվել իմունահիստոքիմիական եղանակով MMR չորս գեների համար (MLH1, MSH2, MSH6, and PMS2) կամ MSI-ԴՆԹ թեստավորման միջոցով [66]:

12.782 պացիենտների ապրելունակությանը վերաբերվող 31 ուսումնասիրությունների համակարգային հետազոտություններով պարզվել է, որ MSI բնութագրիչներով ուռուցքների դեպքում կանխատեսումը եղել է բարենպաստ և՛ ԱՋԱ և ՛ ԸԱ առումով, սակայն այն կախված էր հիվանդության փուլից: Բացի այդ ԿՌՔ MSI առկայության դեպքում ադյուվանտ քիմիաթերապիան 5-ֆյլուորոուրացիլի հիմքով անարդյունավետ է

նախնական փուլերում [6, 67]: Ներկայումս կատարվող աշխատանքներում նշվում է, որ MMR կարգավիճակը կարող է ունենալ կանխորոշիչ արժեք որոշ խմբերում, հատկապես առաջընթաց փուլերում գտնվող պացիենտների մոտ, ում տրվում է հակա-ԷԱԳՌ բջջի ծրագրավորված մահվան/ծրագրավորված մահվան լիգանդային սպիտակուցի իմունային արգելակիչ թերապիա [68-70]:

Այս խորհուրդն աջակցություն է ստանում 16.472 պացիենտների ընդգրկվածությամբ 38 հոդվածների համակարգային հետազոտությամբ [6, 7]:

4. **Խորհուրդ չի տրվում – Չկա բավարար ապացուցողականություն խորհուրդ տալու համար**, **որ** BRAF p V 600 **մուտացիոնալ կարգավիճակի որոշումը հանդիսանում է հակա-ԷԱԳՌ արգելակիչներով բուժման պատասխանի կանխորոշիչ մոլեկուլային բիոմարկեր**:

Ինչպես նշվել է 2ա խորհրդում, p V600 դիրքային BRAF մուտացիան կապված է վատ կանխատեսման հետ, հատկապես մետաստատիկ փուլում գտնվող պացիենտների մոտ: Քիմիոթերապևտիկ ռեժիմի պատասխանի գործակիցը, այդ թվում ցետուքսիմաբի և պանիտումումաբի կիրառմամբ ռեժիմի, ցածր է BRAF p V 600 մուտացիայով պացիենտների մոտ [51, 53, 71]: Նույն կերպ, ԷԱԳՌ մոնոկլոնալ հակամարմիններով և քիմիաթերապիայով համակցված բուժման դեպքում ԱԶԱ և ԸԱ ցածր են BRAF p V 600 մուտացիայով պացիենտների մոտ [47, 48]:

Անցկացվել է կույր մետաանալիտիկ հետազոտություն պատասխանելու համար BRAF p V 600 մուտացիայի կանխատեսիչ դերի մասին հարցին: 463 պացիենտների ընդգրկումով KRAS անզուսպ տիպի և BRAF p V 600 մուտացիաներով ուռուցքների հետազոտությամբ չի ցուցաբերել բավականին ապացուցողականություն բացառելու համար KRAS/BRAF անզուսպ տիպի ուռուցքների օգուտների մեծությունը, ինչպես նաև որոշելու համար բուժման՝ վիճակագրորենհավաստի արդյունավետությունը [55]: Երկրորդ մետաանալիտիկ հետազոտությունը ցույց տվեց, որ ԷԱԳՌ մոնոկլոնալ հակամարմիններով բուժումը այ պացիենտների մոտ, ում ուռուցքում առկա է BRAF p V 600 մուտացիա, կապված չէ ԸԱ էական բարելավման հետ, չնայած կա հակում ԱԶԱ

լավացման [72]: Սա ենթադրում է անբավարար ապացուցողականություն խորհուրդ տալու համար BRAF p V 600 մուտացիան որպես կանխորոշիչ բիոմարկեր հակա-ԷԱԳՌ մոնոկլոնալ հակամարմիններով բուժման օգուտի գնահատան նպատակով:

Այս խորհուրդն աջակցություն է ստանում հինգ համակարգային հետազոտություններով [47, 48, 51, 53, 71]:

5.**Խորհուրդ չի տրվում – Չկա բավարար ապացուցողականություն խորհուրդ տալու համար ԿՌՔ հյուսվածքում** PIK3CA **մուտացիոնալ անալիզը կլինիկական փորձաշրջանից դուրս թերապիայի ընտրության համար**:

Ռետրոսպեկտիվ հետազոտությունները ենթադրում էին ապրելունակության բարելավում հետվիրահատական շրջանում ասպիրինի օգտագործումով այն պացիենտների մոտ, ում ուռուցքային հյուսվածքում առկա է PIK3CA մուտացիա: Չնայած համապարփակ RAS թեստավորմանը, շատ հիվանդներ դեռևս չեն արձագանքում EGFR մոնոկլոնալ հակաբորբոքային թերապիային: Լրացուցիչ բիոմարկետները, որոնք ուղղորդում են այդպիսի բուժման նպատակով պացիենտների ընտրության համար, ցանկալի են:

PIK3CA մուտացիաներ առկա են ԿՌՔ պացիենտների 10-18%-ի մոտ, առաջնահերթ 2 և 20 էկզոններում, և հանգեցում են p100a ֆերմենտային ակտիվացման, որ էլ նպաստում է PI3K ակտիվության բարձրացմանը և ուռուցքային փոխակերպման բարձր ունակությանը: Ամեն դեպքում, KRAS կամ NRAS, ինչպես նաև PIK3CA մուտացիաները կարող են հավելյալ հայտնաբերվել նույն ԿՌՔ հյուսվածքում, և որոշ դեպքերում՝ զուգահեռաբար [3, 8]: PIK3CA մուտացիաները դրական կապ ունեն KRAS էկզոն 12 և 13 մուտացիաների հետ [3]: Որոշ մետաանալիտիկ և անհատական պացիենտների լայն հետազոտություններ են կատարվել ԿՌՔ-ի 4-րդ փուլում պացիենտների մոտ PIK3CA մուտացիայի կանխատեսիչ դերի գնահատման համար, բոլոր KRAS առանց մուտացիա/անզուսպ մուտացիայով պոպուլյացիայում:Այս հետազոտությունները հիմնականում նշում էին ավելի վատ պատասխանի գործակից և ԱՋԱ PIK3CA մուտացիաներով պացիենտների մոտ, ինչը հանդիպում էր նաև էկզոն 20 մուտացիայի

դեպքում [3, 33, 50, 71]: PIK3CA- ի կանխարգելիչ ազդեցությունը առաջինից մինչեւ 3-րդ հիվանդությունների ժամանակ հակասական է [75-77]:

Բազմաթիվ պրոսպեկտիվ օբսերվացիոն հետազոտություններ ցույց են տվել ԿՌՔ-ով պացիենտների մոտ ասպիրինի օգտագործման և մահացության նվազեցման միջև կապը [78-80]: ԿՌՔ-ի հետդիագնոստիկ ասպիրինային բուժման արդյունավետության մասին տեղեկությունները սահմանափակ են: Դոմինգոն [81] և Լիաոը [82] գտել են ապրելունակության առավելությունը միայն ասպիրինի հետվիրահատական կիրառումով այն օգտագործողների համար, որոնց ուռուցքները ցուցադրում են PIK3CA մուտացիաները; Սակայն, վերջին կոհորտ ուսումնասիրությունը չի հաստատել այդ դիտողությունները [83]:

Այս խորհուրդն աջակցություն է ստանում երկու համակարգային հետազոտություններով [33, 40]: Ներկայումս ռետրոսպեկտիվ տվյալները PIK3CA մուտացիանօգտագործելը հակա-ԷԱԳՌ հակամարմնային բուժման ժխտման համար ԿՌՔ-ի 4-րդ փուլում գտնվող պացիենտների մոտ կամ որպես ասպիրինի կիրառման ընտրող գործոն առաջինից 3-րդ փուլերում բավարար չեն օգտագործման համար կլինիկական փորձաշրջանից դուրս:

6. **Խորհուրդ չի տրվում - Չկա բավարար ապացուցողականություն խորհուրդ տալու համար ԿՌՔ հյուսվածքում** PTEN **անալիզը** (**էքսպրեսիա իմունահիստոքիմիայով կամ դելեցիա** in situ **ֆլյուորեսցենտային հիբրիդիզացիայով**) **այն պացիենտների համար**, **ու համար նախատեսված է բուժում կլինիկական փորձաշրջանից դուրս**:

PTEN գործում է որպես ուռուցքի սուպրեսոր գեն, և դրա կորուստը հանգեցնում է PI3K/AKT ախտաբական ուղու կանոնավորման խախտման: PTEN մուտացիաները հանդիպում են ԿՌՔ-ի 5-14% դեպքերում [4, 84] և PTEN էքսպրեսիայի կորուստը կարող է հանդիպել KRAS, BRAF և PIK3CA մուտացիաներով ուռուցքներում:

Թեև գոյություն ունեն ապացույցներ, որ PTEN-ը քաղցկեղի զարգացման կարևոր գործոն է, PTEN-ի էքսպրեսիայի և կանխատեսելի / կանխորոշման արժեքի միջև կապը շարունակում է վիճահարույց մնալ, մի քանի ուսումնասիրություններ ցույց են տվել, որ

ավելի վատ կանխատեսման հետ կապեր են ստեղծում և ուրիշ գեներ: Կատարվել են չորս համակարգային հետազոտություններ, որոնք ցույց են տվել, PTEN-ի էքսպրեսիայի կորուստի համեմատությունը նորմալ PTEN-ի էքսպրեսիայի հետ 31 հոդվածներում, 2.545 պացիենտների ընդգրկումով [20, 50, 85, 86]: Օգտագործվել են ԻՀՔ և FISH:

Որոշ հետազոտություններ ցույց են տվել կապը PTEN-ի կորստի, տեղային վերականգնման, առաջընթաց TNM փուլի, ավշահանգույցներում մետաստազների առկայության և 5 տարի և քիչ ապրելունակության միջև [87-90]: Այլ հետազոտություններ չեն բացահայտել կապ PTEN կարգավիճակի, պացիենտների ապրելունակության, ուռուցքի տարբերակման աստիճանի, լյարդում մետաստազների առկայության միջև [91-93]: Անդրադառնալով նպատակային ԷԱԳՌ բուժման պատասխանին, որոշ հետազոտություններ բացահայտել են կապ PTEN-ի էքսպրեսիայի կորստի և ցետուքսիմաբի և պանիտումումաբի հանդեպ թույլ պատասխանի միջև [94-97]: Ամեն դեպքում կան հրատարակումներ, որտեղ հակա-ԷԱԳՌ բուժման և PTEN-ի էքսպրեսիայի կորստի միջև կապ չի հայտնաբերվել [98-100]: Քանի որ առկա են նշանակալի անհամաձայնություններ ԿՌՔ պացիենտների մոտ PTEN-ի էքսպրեսիայի կանխատեսիչ և կանխորոշիչ դերի վերաբերյալ, անհրաժեշտ են հետագա ուսումնասիրություններ:

Այս խորհուրդն աջակցություն է ստանում 20 հետազոտություններով [4, 20, 50, 84-100]:

7. **Փորձագիտական կոնսենսուսային կարծիք – Մետաստատիկ կամ կրկնված քաղցկեղային հյուսվածքներն առավել գերադասելի նմուշներ են բուժման կանխատեսիչ բիոմարկերների թեստավորման համար և պետք է օգտագործվեն**, **եթե այդպիսի հյուսվածքներ կանև ադեկվատ են**: **Դրանց բացակայության դեպքում առաջնային ուռուցքային հյուսվածքը կարող է հանդիսանալ ընդունելի այլընտրանք և օգտագործվել**:

Կլինիկական պրակտիկայում ԿՌՔ-ով յուրաքանչյուր հիվանդից հիվանդության ընթացքում մեկ կամ մի քանի նմուշներ կարող են լինել մոլեկուլային թեստավորման համար: Այդ նմուշները կարող են հանդիսանալ նախնական ախտորոշիչ բիոպսիաները,

առաջնային ուռուցքի վիրահատական ռեզեկցված նյութը, բջջաբանական նյութը, բիոպսիան մետաստատիկ կամ կրկնված ուռուցքից:

Առաջնայինև մետաստատիկ ախտահարումների միջև անհամապատասխանությունը կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով, ներառյալ ուռուցքի հետերոգենությունը, գնահատումը և այլն: Կան գրականության համակարգային վերլուծություններ ԿՌՔ մուտացիոնալ կարգավիճակի համեմատության համար առաջնայինև մետաստատիկ ուռուցքային հյուսվածքում:

Այս խորհուրդն աջակցություն է ստանում երկու ռետրոսպեկտիվ կոհորտ հետազոտություններով [101, 102]:

8. **Փորձագիտական կոնսենսուսային կարծիք – Ֆորմալինում ֆիքսված և պարաֆինում լցոնված հյուսվածքները ընդունելի նմուշներ են ԿՌՔ մոլեկուլային բիոմարկերների մուտացիոնալ թեստավորման համար:Այլ նմուշների օգտագործումը (օրինակ, ցիտոլոգիական նմուշներ) պահանջում է լրացուցիչ պատշաճ վավերացում, ինչպես ցանկացած փոփոխություններ հյուսվածքների մշակման արձանագրություններում**:

Կատարվել են մի շարք հետազոտություններ, որոնցում ԿՌՔ-ի KRAS մուտացիոնալ թեստավորումը կատարվել է ինչպս ՖՖՊԼ, այնպես էլ թարմ և սառեցված հյուսվածքներում: 17-րդ խորհրդում կարևորվում է ախտաբանի կողմից ընտրված ուռուցքի ներկված պրեպրատների թեստավորումը, քանի որ ճշտված չէ ուռուցքային բջիջների ամենամեծ քանակություն ապահովող տեսադաշտը մակրո - և միկրոհատումներով: Բիոպսիոն և հետվիրահատական նյութերը նույն կերպ ընդունելի են, եթե պարունակում են հետազոտության համար ուռուցքային բջիջների անհրաժեշտ քանակ: Բջջաբանական նյութը ևս կարող է լինել բավարար, սակայն պահանջում է պատշաճ վավերացում: ՖՖՊԼ բջջային բլոկերը թույլ են տալիս գնահատել ուռուցքային բջիջների պարունակությունը և կենսունակությունը [104]: Լաբորատորիաները պետք է ստեղծեն նվազագույն ուռուցքային բջիջների պարունակությունը նմուշի մեջ, որը հիմնված է վալիդացված փորձի արդյունքների վրա [105, 126]: Հեղուկ բիոպսիոն

թեստերն օգտագործում են պլազման և կարող են կիրառվել ուռուցքի կրկնման կան բուժմանը դիմակայման մոնիթորինգի համար: Այս մոտեցման ոչ ինվազիվ բնույթը տալիս է մեծ պոտենցիալ կլինիկական կիրառման համար [106]: Սակայն, ներկայումս, հեղուկային բիոպսիայի կլինիկական կիրառումը սպասում է առողջ վալիդացման և հետագա ուսումնասիրությունների՝դրանց կլինիկական օգտակարությունը որոշելու համար:

9. **Ուժեղ խորհուրդ - Լաբորատորիաները պետք է օգտագործեն ԿՌՔ մոլեկուլային բիոմարկերների թեստավորման՝ կլինիկական օգտագործման համար բավարար կատարողական հատկանիշներով մեթոդներ**:

Կլինիկական վավերացումը գնահատում է մոլեկուլային բիոմարկերի թեստավորումը ըստ հիվանդության կլինիկական բնութագրի և/կամ թեստավորված մարկերի, համոզվելու համար որ այն "նպատակահարմար" է: Կլինիկական վավերացման տարրերը ներառում են անալիտիկ զգայունությունը, անալիտիկ սպեցիֆիկությունը, կլինիկական զգայունությունը և կլինիկական սպեցիֆիկությունը: Կլինիկական վավերացման համար տվյալները կարող են ձեռք բերել լաբորատորիայի կողմից իրականացվող ուսումնասիրությունները, ուսումնասիրությունները, որոնք ներկայացվել են հավատարմագրված գրականության մեջ կամ այլ հավաստի աղբյուրներում: Անհրաժեշտ է ունենալ լաբորատորիայի որակավորված ղեկավար, ով պատասխանատու է այն բանի համար, որ լաբորատորիան մատուցում է թեստավորման որակյալ ծառայություններ բոլոր առումներով [107]:Խիստ վավերացում պետք է իրականացվի՝ապահովելու բոլոր այն մոլեկուլային մարկերների փորձարկումներիմեթոդները, այդթվումԿՌՔ օգտագործվողները, որոնք պատրաստ են կլինիկական լաբորատորիայում ներդրման համար: Այսնպատակինհասնելուհամարթեստավորմանգործընթացիյուրաքանչյուրքայլպետքէուշ ադիրգնահատվիևարձանագրվի:Այս թեմայի վերաբերյալ հրատարակվել են գերազանց եւ համապարփակ փաստաթղթեր, և մանրամասն վերանայում է տրվում 10-րդխորհրդում:

10. **Ուժեղխորհուրդ – ԿՌՔմոլեկուլայինբիոմարկերներիթեստավորումըպետքէվավերացվիլավագույնլաբորատորգործունեությանըհամապատասխան**:

ԿՌՔ-իմոլեկուլայինթեստավորմանպատշաճվավերացումըկարևորէ, ապահովելուհամարպացիենտներիհամապատասխանխնամք:Եթեվավերացումըադեկվատչէ, այնկարողէհանգեցնելսխալարդյունքներիևոչճշգրիտախտորոշման, կանխատեսմանև/կամբուժականմիջոցառումների: Օրինակ, RAS թեստավորմանառումովկեղծ-դրականարդյունքըկհանգեցնիբուժմանոչլիարժեքկատարման, այնդեպքումերբկեղծբացասականարդյունքըկհանգեցնիանարդյունավետթերապիայի, որիարդյունքումկավելանանծախսերըևավելորդկողմնակիազդեցությունները: Մոլեկուլայինթեստավորումըհամալիրգործընթացէ, ուստիպրեանալիտիկ (նյութիտիպըևմշակումը), անալիտիկ (փորձարկմանկատարումը) ևպոստանալիտիկ (տեղեկատվություն, եզրակացություն) փուլերիպատշաճվավերացումըկրումէհրամայականբնույթ[109, 110]: Վավերացմանուսումնասիրությանբնույթըհաճախկախվածէանալիտից (գենից), մուտացիաներից, մոլեկուլայինվնասումներից, տեխնոլոգիայիցևայլն, սակայնամենդեպքումայնպետքէկատարվիլավագույնլաբորատորգործունեությանըհամապատասխան [11, 112]:

Լրացուցիչնկատառումներըպետքէներառեննմուշիմշակումը (ներառյալմակրո-ևմիկրոհատումը, հյուսվածաբանականմշակումը, ֆիքսացիայիժամանակահատվածը) ևռեագենտներիստաբիլությունըևպահպանումը:

Հարկավորէճիշտստուգումներիրականացնելևկիրառելգնահատմանարդյունքումհայտնաբերվածպոտենցիալմուտացիաներիմեծամասնությունըևվալիդացմանմեջառկահայտնաբերմանսահմանըստուգելուհամար:Իվերջո, վավերացմանգործընթացումպետքէուշադրությունդարձնելհաշվետվությանը[115]:

Նախավերլուծական (պրեանալիտիկ) փոփոխականներ

Պետքէհաշվիառնել,
որհիստոլոգիականկամնախավերլուծականմշակումըպետքէներառվիևվավերացնողփա
թեթումպետքէընդգրկվեններկայացուցչականգործընթացներ:Հատուկնմուշներիտեսակն
երըևսպետքէպատշաճվավերացվեն:ԿՌՔ-
իբիոմարկերներիթեստավորմանհյուսվածքներիմեծմասըստացվումէՖՖՊԼհյուսվածքնե
րից:ՖորմալինայինֆիքսացիանբերումէԴՆԹ-
իֆրագմենտացիայիդրանումհիստոնայինսպիտակուցիֆիքսացիայի: Հետևաբար,
ՖՖՊԼհյուսվածքներիմեծամասնությունընախատեսվածէարտադրանքիավելիքան 200
բազայինզույգերիհամար:
Ֆորմալինայինֆիքսացիայիտևողությունընևպարաֆինայինբլոկերիպահպանմանժաման
ակահատվածընևսկարողենպահանջելՖՖՊԼհյուսվածքներիթեստավորմանվավերացում:
Հյուսվածքայինայլնմուշներընևսպետքէվավերացվեն,
եթեկլինիցիստիկողմիցառաջարկվելենորպեսհետազոտմաննյութ,
օրինակբջջաբանականնմուշները: Վերջապես,
թեստավորումըպետքէինչքանհնարավորէսահմանափակվիինվազիվուռուցքայինհյուսվ
ածքով,
բացառելովադենոմատոզհյուսվածքիկամանփոփոխհարակիցհյուսվածքներիառկայությո
ւնը (օրինակլորձաթաղանթի, մկանայինշերտիևայլն):

Անալիտիկփոփոխականներ

Վերլուծական ճշգրտությունը ապահովելու համար նմուշների ընտրությունը պետք է իրականացվի ուշադիր, որպեսզի հնարավորինս շատ պոտենցիալ մուտացիաներ հայտնաբերվեն և ապահովվեն ակնկալվող նմուշների հնարավոր տեսակները: Ստուգման ճշգրտությունը ճշտելու համար պետք է կիրառվի ոսկե ստանդարտ մեթոդ կամ լաբորատորիաների միջև համեմատություն: Օրինակ, CAP ակրեդիտացիայի համար առնվազն 20նմուշներ պետք է ընդգրկված լինեն որակական և քանակական հետազոտության մեջ [112]: Կարող են անհրաժեշտ լինել ավելի շատ նմուշներ: Եթե հետազոտությունը կատարվում է մեկ գենի համար, ապա այն պետք է ուղղված լինի

հնարավորինս շատ մուտացիաների հայտնաբերմանը: Մուլտիգենային հետազոտությունները պետք է կատարվեն ավելի շատ նմուշների վրա և ուղղված լինեն ավելի մեծաթիվ մուտացիաների հայտնաբերմանը:

ԿՌՔ նմուշները կարող են տարբեր չափերի լինել սկսած մեծ վիրահատական նմուշից՝ բազմաթիվ ուռուցքային բջիջների առկայությամբ մինչև փոքր առաջնային ուռուցք կամ լյարդի մետաստատիկ ուռուցքի բիոպտատ, կամ ռեկտալ բիոպտատներ նեոադյուվանտ թերապիայից հետո՝ բջիջների սահմանափակ թվով: Թեստերից շատերը պատվիրվում են մետաստատիկ ախտահարման հայտնաբերման համար, ուստի միայն բարակ ասեղային բիոպտատը կամ բջջաբանական հետազոտությունը կարող են լինել հասանելի: Ներկայումս հյուսվածքների ծավալն ու մատչելիությունը նվազում են, իսկ օժանդակ փորձարկումները՝ (ԻՀՔ և մոլեկուլային հետազոտություններ) ավելանում: Խիստ վերլուծական զգայունությամբ լինելու հետազոտության հնարավորությունը կարևոր է, եթե լաբորատորիան թեստավորում է ուռուցքի ցածր պարունակությամբ նմուշներ: Հետազոտությունը կարող է հայտնաբերել մուտացիաներ, եթե նմուշի առնվազն 20%-ը կազմում են ուռուցքային բջիջները:

Հետանալիտիկ փոփոխականներ

Հետվերլուծությունը շատ կարևոր է համոզվելու համար նախաանալիտիկ և անալիտիկ փոփոխականների վավերության մեջ: Մեկ գեներով հետազոտությունների համար վերլուծության ժամանակ օգտագործված ծրագրային ապահովումը պետք է վավերացվի: Ցանկացած հետազոտություն պետք է կատարվի նմուշների վավերացումից հետո:

Եզրակացության ձևաչափը ևս պետք է մշակվի և որոշվի վավերացման ընթացում: Հիվանդի եզրակացության մեջ ներառվող մեկնաբանությունները ևս պետք է զարգանան վավերացման ընթացքում համոզվելու համար, որեզրակացությունները ճիշտ են հասկացվել [112]: ″Մարդու գենոմի կազմակերպության″ դասակարգումը և ″Բիոտեխնոլոգիական տեղեկատվության ազգային կենտրոնի″ տրանսկրիպցիոն համարը պետք է օգտագործվեն վավերացման և եզրակացության մեջ [116]:

Որպես վերջաբան, ԿՌՔ մոլեկուլային թեստավորման հետազոտությունների վավերացումը ծայրահեղ կարևոր է եզրակացության ճշգրտության և հիվանդի պատշաճ խնամքի համար: Այդ նպատակով առկա են լավագույն լաբորատոր գործունեության մի շարք փաստաթղթեր [11-113, 115]:

11. **Ուժեղ խորհուրդ – Լաբորատորիաները պետք է վավերացնեն կոլոռեկտալ քաղցկեղի մոլեկուլային բիոմարկերների իմունահիստոքիմիական հետազոտության կատարումը լավագույն լաբորատոր գործունեությանը համապատասխան** (MLH1, MSH2, MSH6, PMS2):

ԴՆԹ-ի MMR-ի նորմալ բիոքիմիայի համար ներկայումս կարևորվում են չորս սպիտակուցներ (MLH1, MSH2, MSH6, PMS2) [117-119]:Ինչպես նշվելէ 2բխորհրդում, մուտացիայի կամ էպիգենետիկ լռեցման արդյունքում վնասված ԴՆԹ-ի անհամապատասխան վերականգնման սպիտակուցները հանգեցնում են նորմալ MMR սպիտակուցների հետերոդիմերիզացիայի, սխալ զույգերի հիմքերի նորմալ վերականգնման կորստի և կարճ ներառումների/դելեցիաների, ինչը հանգեցնում է միկրոսատելիտային անկայունության [119, 120], առավել հաճախ դասակարգվող որպես dMMR: MMR ֆունկցիայի կորուստը որպես կանոն ուղեկցվում է սպիտակուցի էքսպրեսիայի կորստի հետ, ուստի MMR սպիտակուցների իմունահիստոքիմիական թեստավորումը օպտիմալ է ուռուցքային բջիջների կորիզներում MMR սպիտակուցների էքսպրեսիայի կորուստը հայտնաբերելու համար: Չորս սպիտակուցներից յուրաքանչյուրը կարող է հայտնաբերվել պարաֆինային հատույթներում, օգտագործելով շուկայում հասանելի առաջնային և երկրորդային հակամարմինները և այլն: Հակա-MMR սպիտակուցային հակամարմնի ներկման գործելակարգերի զարգացումը ստանդարտ մոտեցումներով ցույց է տալիս 1՝ հետին ֆոնի ավելորդությունների բացակայությունը միայն երկրորդային հակամարմիններ օգտագործելիս և 2՝ փորձարարական օպտիմիզացիա՝ ազդանշան/ավելորդություն գործակցի, բուֆերների,հակամարմինների տարբեր կոնցենտրացիաներիթեստավորումով և ռեակցիայի պայմաններով, ստանալով առավելություն ներքին հսկման բջիջներով,

ինչպիսիք են լիմֆոցիտները, հենքի կամ այլ ոչ ուռուցքայինբջիջները: Վերջնական ներկման գործելակարգը վավերացումը պահանջվում է մինչև կլինիկական օգտագործման համար կիրառումը [121]:

Երբ գործելակարգը որոշված և վավերացված է տվյալ հակամարմնի համար և առկա է հայտնի դրական հսկիչ (օրինակ նշիկ), այն սովորաբար անցկացվում է անծանոթներին զուգահեռ: Սա ցույց է տալիս, որ MMR սպիտակուցը հայտնաբերվում է այդ ներկման դեպքում և թույլ է տալիս անծանոթ նմուշում հավատալ էքսպրեսիայի կորստի արդյունքին: MMR սպիտակուցներից յուրաքանչյուրն ունի էքսպրեսիա ոչ ուռուցքային հյուսվածքներում, օրինակ լիմֆոցիտներում, խիստ էքսպրեսիա սաղմնային կենտրոններում, ուստի աղու հատույթների մեծ մասը կարող է ունենալ ներքին հսկիչ:

Ընդհանուր առմամբ, MMR սպիտակուցների իմունահիստոքիմիական հայտնաբերման մեթոդը վստահելի մեթոդ է ԿՌՔ-ի պարաֆինային բլոկերի հատույթներում առանձին սպիտակուցների էքսպրեսիայի կորստի հայտնաբերման համար: Բարձր աստիճանի միկրոսատելիտային անկայունությամբ (MSI-H) ԿՌՔ-ների մեծ մասի մոտ ԻՀՔ եղանակով ԴՆԹ-ի MMR սպիտակուցի էքսպրեսիայի բացակայությունը ուռուցքային բջիջների կորիզներում միանման է ուռուցքի բոլոր բջիջներում [122, 123]: Նկարագրված են հետերոգեն ներկման եզակի դեպքեր [124]: եթե MSH2 և MLH1 ցուցաբերում են էքսպրեսիայի կորուստ ֆունկցիայի կորստի արդյունքում, ապա դրանց հետերոդիմեր զույգերը ևս (MSH և PMS2) էքսպրեսիայի չեն ենթարկվում:

Չնայած սովորաբար հայտնաբերվում է MMR սպիտակուցի իմունառեակտիվություն ԿՌՔ-ի dMMR-ում, նորմալ իմունառեակտիվականություն կարող է հայտնաբերվել dMMR-ի 10% դեպքերում [125], ուստի MSI ԴՆԹ թեստավորումը պետք է կատարվի կամ աստիճանական, կամ որպես միաժամանակյա փորձարկում:

12. **Փորձագիտական կոնսենսուս կարծիք - Լաբորատորիաները պետք է ապահովեն կլինիկականորեն համապատասխան շրջադարձային և հյուսվածքների նմուշների օգտագործման օպտիմալ ժամանակներ՝կիրառելով համապատասխան**

մեթոդներ կոլոռեկտալ քաղցկեղի՝ կլինիկորեն նշանակալի մոլեկուլայինև իմունահիստոքիմիական բիոմարկերների համար:

ԿՌՔ-իբիոմարկերների թեստավորման արդյունքների զեկուցման նպատակահարմարությունը պայմանավորված է երկու գործոններով. հիվանդի վարման որոշումների անհրաժեշտությամբ և, ավելի հաճախ, պացիենտների անհանգստությամբ:Հետևաբար, նման գնահատումների արդյունքները պետք է ժամանակի ընթացքում մատչելի լինեն բուժման գործընթացում ներգրավված կլինիցիստի համար, այս տեղեկությունը հիվանդին փոխանցելու նպատակով:Այս կարիքը բարդանում է հիվանդի կողմից՝ ստանալով իր ախտորոշման և բուժման ծրագրերի լիարժեք ըմբռնումը:Հիմնական չափորոշիչն այն է, որ բիոմարկերի թեստավորման ոչ շտապարդյունքները մատչելի կլինեն բուժող բժշկին մոլեկուլային ախտորոշման լաբորատորիայում ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:Այս շրջադարձային ժամանակն առաջարկվել է մոլեկուլային ախտորոշման փորձարկման այլ ուղեցույցներում [105, 126, 127]: Լավագույն դեպքում թեստավորման պահանջի փոխանցման, հյուսվածքային բլոկի ընտրության, մշակման և բուն թեստավորման ժամանակահատվածը պետք է կազմի 10օր: Հետևաբար, լաբորատորիաները պետք է ամեն ջանք գործադրեն թեստավորման համար համապատասխան հյուսվածքային բլոկների ապահովման հետաձգումների նվազեցման հարցում: Թեստավորող լաբորատորիաները պետք է ամեն ջանք գործադրեն, նվազագույնի հասցնելու մշակման ժամանակը և արդյունքների վերադարձը:

Ռեզեկցված ԿՌՔ-ի պարագայում մոլեկուլային թեստավորման համար անհրաժեշտ ուռուցքային նյութի քանակը սովորաբար սահմանափակ չէ: Երբեմն, նեոադյուվանտ թերապիայի արդյունքում ռեզիդուալ ուռուցքի քանակը ռեզեկցված նյութում կարող է լինել քիչ կամ ֆոկալ: Նույն կերպկարող է սահմանափակ լինել նաև բիոպսիոն կամ բարակ ասեղային ասպիրացիոն նյութի քանակը և ստեղծի դժվարություններ ցանկալի մարկերների գնահատման համար: Այդ հանգամանքներում առկա պարաֆինային

բլոկերը պետք է հատվեն խիստ քննադատորեն, պահպանելու համար նյութի անհրաժեշտ քանակ հետագա մոլեկուլայինկամ իմունահիստոքիմիական հետազոտությունների նպատակով, ինչպես համարվում է հնարավորինս ճշգրիտ և տեղեկատվական գնահատումը հնարավորինս ապահովելու համար:

RAS թեստավորման համար անհրաժեշտ ժամանակահատվածը առաջընթաց փուլում գտնվող ուռուցքների պարագայում թելադրված են համապատասխան քիմիաթերապիայի ընտրելու և նախաձեռնելու անհրաժեշտությամբ: Լավագույն դեպքում նման տեղեկատվությունը պետք է հասանելի լինի կամ հետվիրահատական ուռուցքային գնահատման ընթացքում, կամ երբ հիվանդի բուժման տարբերակները քննարկվում են "ուռուցքային խորհրդում": Որոշ ինստիտուտներում այդ քննարկումները կարող են վիրահատությունից կամ բիոպսիայից մեկ շաբաթ անց, և հավանաբար ոչ ուշ, քան հյուսվածաբանական ախտորոշման և փուլավորմանը հաջորդող երկրորդ շաբաթը: Այսպիսով, ժամանակահատվածը ոչ ավել քան 10 օր, պետք է լինի բիոմարկերի թեստավորման արդյունքների հասանելիության չափորոշիչ:

Բացառիկ հանգամանքներում նույնիսկ ավելի կարճ փորձարկման ժամանակահատվածը կարող է համապատասխան լինել: Երբեմն հիվանդներն ունեն բավականին անամնեզ Լինչի համախտանիշի մասին մտածելու, ինչն արագացնում է վիրահատության չափի մասին քննարկումները և որոշումները (օր. Տոտալ կոլէկտոմիա կամ պրոֆիլակտիկ հիստերէկտոմիա ընտրված ախտահարումներով պացիենտներիմոտ): Այդպիսի հանգամանքներում պետք է ջանքեր գործադրվեն, որպեսզի հնարավորինս արագ ստացվեն թեստավորման արդյունքները, ինչը թույլ կտա կատարել տեղեկացված որոշումների ընդունում: MMR ԻՀՔ կարող է կատարվել 48 ժամ կամ ավելի քիչ ժամանակահատվածում և համապատասխան կլինիկական կոնտեքստում, MMR սպիտակուցների պահպանված էքսպրեսիան կլինի Լինչի համախտանիշի դեմ: Հակառակը, MMR սպիտակուցների էքսպրեսիայի կորստի դեպքում անհրաժեշտ կլինի ճշտել հավելյալ կլինիկական տվյալներ, ընտանեկան անամնեզը, կատարել հետագա BRAF մուտացիայի թեստավորում, MLH1 մեթիլացման

թեստավորում: Բացի այդ, ԴՆԹ-ի MMR կարգավիճակը, կատարված MMR ԻՀՔ-ով կամ ԴՆԹ-ի MSI թեստավորմամբ, որպես ԿՌՔ-ի բոլոր տեսակների լավ կանխատեսիչ բիոմարկեր, պետք է ստացվի 10 օրվա ընթացքում:

13. **Կոլոռեկտալ քաղցկեղի բիոմարկերների մոլեկուլային և իմունահիստոքիմիական թեստավորումը պետք է կատարվի ժամանակին**, **հիմնվելով կլինիկական տվյալների վրա**, **ինստիտուցիոնալ ընդունված պրակտիկային համապատասխան**:

Նշում. Թեստի պատվիրումը կարող է առաջանալ յուրաքանչյուր դեպքում կամ բժշկական անձնակազմի սահմանած քաղաքականությամբ:

ԲիոմարկերներիմոլեկուլայինևԻՀՔթեստավորմանօգտագործումըգնալովշատանումէպացիենտներիվարմանգործում:
Կանխորոշիչբիոմարկերնավելիհաճախկիրառվումենհիվանդությանվաղփուլերումադյուվանտքիմիաթերապիայիօգտագործմանթիրախայինորոշմանկայացմանհամար: Նման քննարկումները պահանջում են թեստերի առկայություն ժամանակին, իսկ թերապիայի նախաձեռնելու ձգձգումները կապված են ավելի վատ արդյունքների հետ [127]: Կանխատեսիչբիոմարկերները պետք է որոշվեն ճիշտ ժամանակին՝ քիմիաթերապիայի թիրախային ընտրման և երկարաժամկետ բուժման պլանավորման համար, ինչպեսօրինակհակա-ԷԱԳՌ մոնոկլոնալ հակամարմիններով բուժման դեպքում: Պետք է խրախուսվեն ինստիտուցիոնալ քաղաքականությունները և գործառույթները, որոնք խրախուսում են համապատասխան մոլեկուլային և ԻՀՔ մարկերային փորձարկման արագ նախաձեռնությունը:

14. **Լաբորատորիաները պետք է ձեռնարկեն քաղաքականություն համոզվելու համար**, **որ առկա է մոլեկուլային թեստավորման հյուսվածային նմուշների արդյունավետ տեղադրումև օգտագործում**, **հատկապես փոքր նմուշների դեպքում**:

Առավել մատչելի դարձող մոլեկուլայինև ԻՀՔ թեստավորումների թիվըպացիենտների վարման գործընթացում գնալով շատանում է: Թեստերի մեծ մասն անց է կացվում ՖՖՊԼ նմուշների վրա, որն ավելի արդյունավետ է բիոպսիոն և հետվիրահատական նյութի պահպանման համար: Քաղցկեղային հյուսվածքը պետք է մշակվի լաբորատորիայում սահմանված գործելակարգի համաձայն, որը ներառում է նյութի հատման, ֆիքսացիայի, մշակման և պահպանման գործընթացների որակի հսկողությունը:

Լաբորատոր արձանագրությունները պետք է ներառեն փոքր նմուշների մշակման ընթացակարգեր, ինչպիսիք են, օրինակ, էնդոսկոպիկ կամ ասեղային բիոպսիաների նմուշները և մետաստատիկ ախտահարումների նուրբ ասեղային նմուշները (օրինակ լյարդից կամ թոքից): Խրախուսվում է յուրաքանչյուր հյուսվածքային կասետում հյուսվածքային ֆրագմենտների թվաքանակի սահմանափակումը: Հաստատված գործելակարգերով կարելի է սահմանել հետազոտման ենթակա հյուսվածքների քանակը, ինչը կարող է կանխել հետազոտման ենթակա հյուսվածքների ծախսը և նվազեցնել վերջնական արդյունքի ստացման ժամանակը, անհրաժեշտության դեպքում ապահովել իմունահիստոքիմիական հետազոտության կատարման համար առկա արխիվային հյուսվածքներ:

Խիստ կարևոր է նախ հայտնաբերել կասկածելի մետաստատիկ ԿՌՔ հյուսվածքը խիստ սահմանափակ և փոքր նմուշներում, օրինակ լյարդի բիոպտատում, հետո անցկացնել այլ հավելյալ հետազոտությունների հատուկ ներկման մեթոդներով: Հիվանդի անամնեզում առկա ԿՌՔ-ի փաստը կարող է սահմանափակել իմունահիստոքիմիական հետազոտության ուղղվածությունը: Անհրաժեշտ է ունենալ հաստատված լաբորատոր գործելակարգեր՝ հայտնաբերելու համար բարակ ասեղային բիոպսիայի ենթակա պացիենտներին՝ կանխատեսիչ մոլեկուլային բիոմարկերների գնահատման համար:

Լաբորատորիաները պետք է պահպանեն համապատասխան կատալոգներ և հյուսվածքների նմուշների, ախտորոշիչ սլայդների պահեստավորման այլ ձևեր, որոնք թույլ կտան կատարել քաղցկեղի նմուշների ռետրոսպեկտիվ հետազոտություն:

Խորհուրդը աջակցվում է 15 հետազոտություններով [128-142], ներառյալ ութ պրոսպեկտիվ կոհորտ հետազոտություններ [130-133, 136-138, 142] և յոթ ռետրոսպեկտիվ կոհորտ հետազոտություններ [128, 129, 134, 135, 139-141]:

15. **Փորձագիտական կոնսենսուս կարծիք –Հիվանդի բժշկական թիմի անդամները**, **այդ թվում պաթոլոգը**, **կարող են նախաձեռնել կոլոռեկտալ քաղցկեղի մոլեկուլային բիոմարկերների թեստավորման պատվիրումը ինստիտուցիոնալ ընդունված գործունեությանը համապատասխան**:

Կոլոռեկտալ քաղցկեղով պացիենտների համար ճիշտ ժամանակին ախտորոշումը և բուժման նախաձեռնումը խիստ կարևոր է, ուստի ենթադրվում է, որ մոլեկուլային թեստվորումը պետք է պատվիրվի այնքան արդյունավետ, որքան հնարավոր է, ինստիտուցիոնալ ընդունված գործելակարգի և ուղեցույցերի համապատասխան: MSI թեստավորումը հաճախ պատվիրվում է ախտորոշման ժամանակ, հայտնաբերելու համար Լինչի համախտանիշով պացիենտներին, ադյուվանտ քիմիաթերապիայի կամ կանխատեսման նպատակով: Շատ գերատեսչություններ աշխատում են ալգորիթմներով, ապահովելու համար բոլոր ԿՌՔ-ների MMR անբավարարության գնահատումը, և որպես կանոն դա նախաձեռնվում է պաթոլոգի կողմից, երբ հիվանդի բուժման թիմի անդամների՝ ուռուցքաբանների, պաթոլոգների և այլոց կողմից միասնական հաստատվում է ախտորոշումը: Մոլեկուլային թեստավորումը, որը կատարվում է թիրախային թերապիայի ուղղորդման համար (օր. RAS), կարող է պատվիրել ավելի ուշ, քան առաջնային ախտորոշումը, օրինակ մետաստազների առկայության ժամանակ, այսպիսով գերատեսչությունները կարող են տարբերակել արդյո՞ք անհրաժեշտ է նախաձեռնել թեստավորում նախքան վիրահատական կամ բիոպսիոն նյութի նախնական ախտորոշումը, թե՞ պետք է սպասել մետաստատիկ ախտահարման փուլին՝ թիրախային բուժման համար: Հաճախ ուռուցքաբանները

պատվիրում են կանխատեսիչ մոլեկուլային թեստավորում, քանի որ նրանք պետք է ուղղորդեն բուժումը, սակայն որոշումը չի կարող որոշվել միայն ուռուցքաբանի կողմից, քանի որ պաթոլոգներն են հյուսվածքի պահպանման և փոփոխությունների ախտորոշման կարևոր օղակը: Քանի որ տարբեր գերատեսչություններ տարբերվում են իրենց պացիենտների բնույթով, միջոցներով, բաժանմունքների կազմակերպումով, կանոնակարգով, փոխհատուցման պայմաններով և գործելակարգերի նախասիրություններով, թեստավորման անցկացումը առաջնային ախտորոշման կամ մետաստատիկ ախտահարման փուլում պետք է համատեղ քննարկվի ուռուցքաբանների, պաթոլոգների, բժշկական պատասխանատուների, հիվանդանոցային հանձնաժողովների կողմից:

"Ռեֆլեքս" թեստավորումը, թեստավորման քաղաքականությունը, որը չի պահանջում կլինիկական պատվեր յուրաքանչյուր առանձին դեպքի համար, նպատակահարմար է, եթե համաձայնեցված է ԿՌՔ-ի թիմի կողմից որպես գերատեսչական հաստատված կարգադրություն և կարող է նպաստել՝ արագացնելու նմուշների մոլեկուլային թեստավորման հետևողական ընթացքը: Սակայն կարող են լինել հիվանդներ, որոնք որոշ կլինիկական հանգամանքներից ելնելով ենթակա չեն նպատակային թերապիայի, ուստի լավ համագործակցությունը բուժող թիմի և թեստավորող լաբորատոր թիմի միջև կարևոր է: Մասնավորապես, թեստավորման կարիք չունեն հիվանդության IV փուլում գտնվող, միայն պալիատիվ և հոսպիսային խնամքի կարիք ունեցող հիվանդները: Նույն կերպ, ռեֆլեքսային թեստավորում անցկացնող համակարգում պաթոլոգի և բուժող բժշկի միջև հաղորդակցությունը անհրաժեշտ է, օրինակ որպեսզի թեստավորումը չանցկացվի փոքր բիոպսիոն նյութի վրա, եթե սպասվում է վիրահատություն և ավելի մեծ վիրահատական նյութ, որն ավելի արդյունավետ է գնահատման առումով:

16. **Փորձագիտական կոնսենսուս կարծիք –Լաբորատորիաները**, **որոնք բուժական կանխատեսիչ մոլեկուլային թեստավորման համար կոլոռեկտալ քաղցկեղի նմուշներն ուղարկում են այլ լաբորատորիաներ**, **պետքէ նյութը մշակեն և ուղարկեն ռեֆերենս կենտրոններ ճիշտ ժամանակին**:

Նշում. Առաջարկվում է չափորոշիչ, որ նմուշների 90% պետք է ուղարկվի 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Կարևոր է տրամադրել մոլեկուլային թեստերի արդյունքները ճիշտ ժամանակին՝ յուրաքանչյուր հիվանդի համար ամենահարմար քաղցկեղի բուժման տարբերակը ընտրելու նպատակով: Բուժման նախաձեռնման հետաձգումը կապված է ավելի վատ արդյունքների հետ [127]: Այն լաբորատորիաների համար, որոնք չեն իրականացնում մոլեկուլային թեստավորում և/կամ իմունահիստոքիմիական հետազոտություն ԿՌՔ-ի բուժման ընտրության նպատակով, նմուշները պետք է ուղարկվեն ռեֆերենս կենտրոններ 3 աշխատանքային օրերի ընթացքում, սկսած այն օրվանից, երբ նյութը ստացվել է տվյալ լաբորատորիայում՝ ախտորոշման համար (օրինակ բիոպսիա կամ վիրահատական նյութ): Հիմնական հիմքերը հիմնված են սովորական աշխատանքի արդյունքում հյուսվածքների վերամշակման վրա: Գործնականում ամենաերկարատևը մեծ վիրահատական նյութի մշակումն է, օրինակ կոլէկտոմիայի: Հնարավոր մոտեցումներից մեկն էլ կարող է լինել մակրոսկոպիկ հատման ժամանակ մոլեկուլային թեստավորման համար հյուսվածքային բլոկի ստացումը, կարող են օգտագործվել հյուսվածքային հատույթների ստացման մոլեկուլային գործելակարգերը, ինչը թույլ կտա ուղարկել նմուշները երրորդ աշխատանքային օրը: ԿՌՔ-ի RAS մոլեկուլային թեստավորման այս ժամանակահատվածը նշված է նաև Միացյալ թագավորության ախտորոշիչ խմբի ուղեցույցում [126]:

Լաբորատորիաները պետք է զարգացնեն գրավոր քաղաքականություն՝ որպես որակի ապահովման ծրագրի մի մաս, վերահսկելու բոլոր քաղցկեղների բուժման և կանխատեսման բիոմարկերների շրջանառության ժամկետները:

17. **Փորձագիտական կոնսենսուս կարծիք–Ախտաբանը պետք է գնահատի հետազոտման ենթակա նմուշը**, **որպեսզի ապահովի հյուսվածքի համապատասխանություն՝ որակի**, **քանակի**, **չարորակ բջիջների չափաբաժնի առումով**: **Նմուշի համապատասխանության մասին պետք է կատարվի գրառում եզրակացության մեջ**:

Շատ կարևոր է, որ մոլեկուլային թեստավորման համար բլոկ ընտրելիս պաթոլոգը վստահ լինի հետազոտման մեթոդիև գնահատման ենթակա նմուշի մեջ անհրաժեշտ չափաբաժնով ուռուցքային բջիջների առկայության մեջ: Գնահատման ենթակա հյուսվածքների ընդհանուր քանակը նշանակալի է երկու առումով: Առաջինը, հատված ուռուցքի քանակը պետք է քանակական առումով բավարար լինի ամբողջ ուռուցքի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն ապահովելու տեսակետից: Մինչդեռ վերջին փաստերը ցույց են տալիս, որ որոշ գեներ շարունակում են զարգանալ ուռուցքի առաջընթացի ժամանակ, առաջ բերելով հիմնական ուռուցքի գենետիկ հետերոգենություն:Արդյունքում ԿՌՔ-ի այդ կարևոր ուղղորդող մուտացիաները սովորաբար, սակայն ոչ միշտ, հոմոգեն են ամբողջ ուռուցքային հյուսվածքում: Հետազոտության համար անհրաժեշտ ուռուցքային հյուսվածքի քանակը ամեն դեպքում կարող է տարբեր լինել մասնավոր դեպքերում, և տարբերվել տեղեկատվության, գիտելիքների, կոնկրետ հյուսվածքի համար անհրաժեշտ հետազոտման մեթոդից կախված: Ուռուցքային ԴՆԹ-ի նվազագույն անհրաժեշտ չափաբաժինը ուռուցքային հյուսվածքում որոշվում է տվյալ դեպքի համար ընտրված անալիտիկ մեթոդի զգայունությամբ:

Չարորակ բջիջների քանակը (ի հակադրում ուռուցքի հետ առնչվող ոչ ուռուցքայինների, օրինակ հենքի ֆիբրոզ, էնդոթելային բջիջներ, բորբոքային ներսփռանք) պետք է գնահատել հնարավորինս ճշգրիտ և արձանագրել: Այս գնահատումը շատ հեշտությամբ կատարվում է գնահատված ենթակա դաշտում համեմատելով բորբոքային բջջային կորիզների մասնաբաժինը ոչ ուռուցքային բջիջների կորիզների հետ [143]:Հասկանալով, որ որոշակի գենում մուտացիայի ենթարկված ալելների թիվը կարող է առկա լինել դիպլոիդ ուռուցքային բջիջների ալելների կեսում, 50% ուռուցքային բջիջներ պարունակող օջախը պետք է ունենա մուտանտ ալելների 25% ֆրակցիա, մի արժեք, որը մոտ է հետազոտման մեթոդի անալիտիկ զգայունությանը:Այսպիսով, մինչդեռ մոլեկուլային մեթոդների բազմազանությունը կարող է օգտագործվել

հյուսվածքային նմուշի գնահատման համար, շատ ավելի կարևոր է ճիշտ գնահատել հյուսվածքում ուռուցքային բջիջների համամասնության և քանակության ապահովումը: Ախտաբանի կողմից հյուսվածքի գնահատումը պետք է ապահովի նաև մեռուկացած և դեգեներատիվ փոփոխություններով հյուսվածքների բացառումը մոլեկուլային թեստավորման համար ընտրված նմուշներում, քանի որ այդ ախտաբանական փոփոխությունները կարող են հանգեցնել սխալ արդյունքի: Բիոմարկերների թեստավորման համար ընտրված նմուշներում մեռուկի ցանկացած չափաբաժնի առկայությունը պետք է գնահատվի և արձանագրվի:

18. **Փորձագիտական կոնսենսուս կարծիք –Լաբորատորիաները պետք է օգտագործեն կոլոռեկտալ քաղցկեղի մոլեկուլային թեստավորման այնպիսի մեթոդներ**, **որոնք կարող են հայտնաբերել մուտացիաներն այնպիսի նմուշներում**, **որտեղ մուտանտ ալելների հաճախականությունը առնվազն** 5% **է**, **հաշվի առնելով հետազոտության անալիտիկ զգայունությունը(օրինակ դետեկցիայի սահմանափակում**) **և ուռուցքի հարստացումը** (**օրինակ միկրոհատումներ**):

Նշում. Խորհուրդ է տրվում առնվազն երկու անգամ ստուգել թեստավորման ենթակա նմուշներում ուռուցքային բջիջների նվազագույն քանակը:

Քանի որ մոլեկուլային մարկերների թեստավորման արդյունքների ճշգրտությունը կախված է ինչպես հետազոտվող նյութում ուռուցքային բջիջների պարունակությունից, այնպես էլ ոչ մուտացված ալելների ֆոնին մուտացվածներին հայտնաբերելու հետազոտության զգայունությունից, ենթադրվում է, որ լաբորատորիաները պետք է սահմանեն նվազագույն անհրաժեշտ ուռուցքային բջիջների քանակը որպես նմուշների պահանջի բաղադրիչ: Խորհուրդ է տրվում, որ ախտաբանը հետազոտի բոլոր դեպքերը՝ ուռուցքային բջիջների պարունակության և քանակության գնահատման համար: Եթե որևէ մասնավոր հետազոտություն ունի մուտանտ ալելների հայտնաբերման 5%-ից ցածր սահմանափակում, ապա հետազոտման ենթակա նմուշում ուռուցքային բջիջները պետք է կազմեն առնվազն 10%, այդ ուռուցքներում հետերոզիգոտ մուտացիաների հուսալի հայտնաբերման համար:5% - և ցածր առկայության դեպքում կարող են

օգտագործվել այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են պոլիմերազային շղթայական ռեակցիան, պիրոսեկվենսիան և այլն [130, 137, 138, 142]:

Այս խորհուրդն աջակցություն է ստանում չորս պրոսպեկտիվ կոհորտ [130, 137, 138, 142] և երկու ռետրոսպեկտիվ կոհորտ հետազոտություններով[102, 144]: Ուսումնասիրություններից ոչ մեկը չուներ մեթոդաբանական թերություններ, որոնքմտահոգություն կստեղծենդրանց արդյունքների վերաբերյալ:

19. **Փորձագիտական կոնսենսուս կարծիք –Կոլոռեկտալ քաղցկեղի մոլեկուլային թեստավորման արդյունքները պետք է հասանելի լինեն հնարավորինս անհապաղ, բուժական որոշումներ կայացնելու նպատակով, ինչպես կանխատեսիչ, այնպես էլ կանխորոշիչ**:

Նշում. ենթադրվում է, որ եզրակացությունների 90%-ը պետք է հասանելի լինի նյութը մոլեկուլային ախտորոշիչ լաբորատորիա ընդունելուց հետո առնվազն 10 աշխատանքային օրվա ընթացում:

Կոլոռեկտալ քաղցկեղով պացիենտների ԷԱԳՌ-ի մուտացիայով պայմանավորված ախտաբանական ուղու բացակայության պայմաններում համակցված քիմիաթերապիան, այդ թվում հակա-ԷԱԳՌ, կարող է կապված լինել ապրելունակության բարձրացման հետ: KRAS և NRAS մուտացիաների առկայության պարագայում հակա-ԷԱԳՌ թերապիան էական բուժական արդյունք չի ցուցաբերում [44]: ԿՌՔ-ի երկրորդ փուլում գտնվող պացիենտների մոտ MMR անկատարությունը հանդիսանում է լավ կանխատեսիչ գործոն և հայտնաբերում է այն պացիենտներին, որոնց համար 5-ֆլյուորոուրացիլային ադյուվանտ թերապիան անօգուտ է [145, 146]: MMR դեֆիցիտի կամ BRAF p.V600E մուտացիայի առկայությունը առաջընթաց ԿՌՔ-ի դեպքում ունի կանխատեսիչ կարևորություն [54]:

Ապացուցողականության վրա հիմնված հրատարակումների բացակայության պայմաններում փորձագիտական կոնսենսուս կարծիք է, որ վերը նշված արդյունքները, անկախ փորձարկման մեթոդներից, լինեն հասանելի կլինիկական թիմինհետազոտության պատվիրումից հետո երկու շաբաթվա (10 աշխատանքային

օրերի)ընթացքում: 10 աշխատանքային օրերը չեն ներառում նյութը մինչ լաբորատորիա հասնելը մշակման ժամանակահատվածը:

Այս խորհուրդն աջակցություն է ստանում մեկ կույր, վերահսկվող հետազոտությամբ[44]:

20. **Փորձագիտական կոնսենսուս կարծիք – Կոլոռեկտալ կարցինոմայի մոլեկուլային թեստավորման եզրակացությունը պետք է պարունակի արդյունքներ և մեկնաբանություններ բաժինները և լինի հեշտ հասկանալի ուռուցքաբաններիև ախտաբանների համար**:

Մոլեկուլային թեստավորման արդյունքների եզրակացությունները գնալով ավելի են բարդանում, քանի որ ի հայտ են գալիս սոմատիկ տարբերակների մասին նոր տեղեկատվություն և կլինիկական գործառություն: Կլինիցիստները ցանկանում են եզրակացություն, որը հեշտությամբ հասկանալի է և տալիս է համապատասխան կլինիկական տեղեկատվություն՝ հակիրճ, ճշգրիտ և մանրակրկիտ: Եզրակացությունները պետք է ընդգրկեն և՛ ԴՆԹ-ի, և՛ սպիտակուցների մասին տեղեկատվություն: Միայն կոդոնների դրական լինելու մասին տեղեկատվություն հայտնելը բավարար չէ (օրինակ դրական KRAS կոդոն 12-ի համար): Պետք է օգտագործել Մարդու Գենոմի Տարբերակների Միության դասակարգումը, համադրելով պատմական այլ դասակարգումների հետ [122, 147]:

21. **Խիստ խորհուրդ – Լաբորատորիաները պետք է ընդգրկեն կոլոռեկտալ քաղցկեղի բիոմարկերների մոլեկուլային թեստավորման մեթոդները իրենց լաբորատոր զարգացման բոլոր ծրագրերում**, **ներդնեն զարգացման ծրագրերի որակի համապատասխան հսկողություն**, **որն անհրաժեշտ է համոզվելու համար**, **որ մշակման**, **թեստավորման և եզրակացությունների տրման բոլոր քայլերը կատարվում են հետևողականորեն**: **Մասնավորապես**, **կոլոռեկտալ քաղցկեղի մոլեկուլային թեստավորում իրականացնող լաբորատորիաները պետք է մասնակցեն պաշտոնական թեստավորման ծրագրերին**, **հնարավորության դեպքում նաև այլ ծրագրերի**:

Մասնագիտական թեստավորումը առհասարակ լաբորատորիայի որակի հսկողության կարևոր բաղադրիչն է և տվյալ պարագայում ընդգրկված է ԿՌՔ-ի ուղեցույցում: Այն ներառում է ինչպես մուտացիոնալ, այնպես էլ իմունահիստոքիմիական թեստավորումները:Մասնագիտական թեստավորումներին մասնակցությունը թույլ է տալիս գնահատել և համեմատել թեստավորման իրականացումը այլ լաբորատորիաների և տեխնոլոգիաների հետ, հայտնաբերել կատարման ճշգրտությունը և հուսալիությունը [150]:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ և ԶԱՐԳԱՑՈՂ ԲԻՈՄԱՐԿԵՐՆԵՐ

Այս ուսումնասիրության մեջ ընդգրկված հետազոտությունների մեծ մասը կատարվել են իմունահիստոքիմիական մեթոդով: Իմունահիստոքիմիան արժեքավոր է պաթոլոգիայի լաբորատորիաներում լայնատարած հասանելիության առումով, սակայն ունի սսահմանափակ քանակական հնարավորություններ ստանդարտիզացիայի համար և ենթակա է զգալի միջհետազոտականփոփոխականության: Սոլիդ ուռուցքներում թեստավորվող քանակական հետազոտությունների (գենային էքսպրեսիա, միկրոՌՆԹ էքսպրեսիա, մեթիլացման մակարդակ և այլն) խնդիրը առաջանում է հյուսվածքի ներքին խառը բնույթի պատճառով՝ ուռուցքի և ոչ ուռուցքային բաղադրիչի էական փոփոխականությամբ պայմանավորված:

Վերջերս մեծ հետաքրքրություն են առաջացել ոչ ինվազիվ կանխատեսիչ և /կամ բուժական կանխորոշիչ բիոմարկերների մոլեկուլային թեստավորումը, օրինակ շրջանառող ուռուցքային բջիջների կամ շրջանառող կորիզաթթուների, կամ ազատ կորիզաթթուների թեստավորումը շիճուկում: Սա նշված է որպես ″հեղուկ բիոպսիա″ [152]: Ընդհանուր առմամբ կոլոռեկտալ քաղցկեղի մոլեկուլային բիոմարկերները փորձարկվել են ″հեղուկ բիոպսիայի″նմուշների վրա և խոստումնալից են, սակայն սպասում են հետագա վավերացման:

Ընթացիկ տեղեկատվությունների համաձայն MMR- ի կարգավիճակը կարող է ունենալ

կանխատեսիչ արժեք որոշ դեպքերում, հատկապես հիվանդության առաջընթաց փուլում գտնվող պացիենտների, որոնց համար ենթադրվում է հակա-PD-1/PDL1 բուժում [68, 69]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապացուցողականությունն աջակցում է ԷԱԳՌ-ի ախտաբանական ուղու սպեցիֆիկ գենների մոլեկուլային թեստավորումը, քանի որ դրանք ապահովում են կլինիկորեն գործածվող տեղեկատվություն ԿՌՔ-ով պացիենտների թիրախային բուժման համար հակա-ԷԱԳՌ մոնոկլոնալ հակամարմիններով: Որոշ բիոմարկերներում առկամուտացիաներն ունեն հստակ կանխորոշիչ արժեք (BRAF, MMR), առնվազն երկուսը (KRAS և NRAS) ունեն համեմատաբար խիստ ապացուցողականություն որպես բացասական կանխատեսիչներ հակա-ԷԱԳՌ բուժման իրականացման համար և պետք է օգտագործվեն բուժման ուղղորդման նպատարկով: BRAF մուտացիաները հետևողականորեն կապված են մետաստատիկ ԿՌՔ-ի վատթարագույն ելքի հետ, ներառյալ կրկնումները ադյուվանտ թերապիայից հետո: Տեղայնացված ԿՌՔ-ով և dMMR ունեցող հիվանդներն ունեն հիվանդության բարենպաստ ելք: Ընթացիկ տեղեկատվությունների համաձայն MMR-ի կարգավիճակը կարող է ունենալ կանխատեսիչ արժեք որոշ դեպքերում, հատկապես հիվանդության առաջընթաց փուլում գտնվող պացիենտների, որոնց համար ենթադրվում է հակա-PD-1/PDL1 բուժում: Կանխատեսիչ և կանխարգելիչ մոլեկուլային բիոմարկերների մոլեկուլային թեստավորման համար լաբորատոր մոտեցումներիգործարկումն ընդգրկում է թեստիընտրություն, փորձարկվող նմուշների տեսակ, ժամանակի որոշում,թեստերի պատվիրում և փորձարկման արդյունքների տրման ժամանակ:

Որոշ այլընտրանքային տեխնիկական մոտեցումներ կարող են արդյունավետ լինել և կիրառվել այնքան ժամանակ, քանի դեռ փորձարկման առանձնահատկությունը և զգայունությունը համապատասխանում են կլինիկական կարիքներին:

Ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ

Հայաստանի ախտաբանության բնագավառում լաբորատոր ծառայություններ մատուցող հաստատություններում տվյալ ուղեցույցերի ներդրումը պետք է կրի համակարգված բնույթ: Անհրաժեշտ է մշակել համապատասխան գործելակարգեր, որոնք կլինեն համահունչ ինչպես արդի ուղեցույցայինխորհուրդներին, այնպես էլ տեղային կադրային և տեխնիկական հնարավորություններին: Աշխատանքային խմբի անդամների կարծիքով ներդրման հնարավոր խոչընդոտներից են.

- **Գործող լիցենզավորված լաբորատորիաների խիստ տարբեր տեխնիկական հագեցվածությունը**
- **Կադրերի սակավաթիվ լինելը**
- **Առկա կադրերի մեծամասնության՝ պատշաճ և ժամանակակից շարունակական կրթության բացակայությունը**
- **"Ախտաբան-կլինիցիտ արդյունավետ փոխհամագործակցության բացակայությունը**, **էլեկտրոնային բժշկության և համապատասխան կլինիկական տեղեկատվության հասանելիության դժվարությունը ախտաբանի համար**:

Առաջարկվող աուդիտի ցուցանիշն է.

- **Բուժհաստատությունում ռեգուլյար ախտաբանական քննարկումների/կլոր սեղանների առկայությունը**

Գրականության ցանկ

1. Febbo PG, Ladanyi M, Aldape KD, et al. NCCN task force report: evaluating the clinical utility of tumor markers in oncology. J Natl Compr Cancer Netw. 2011;9(suppl 5):S1–S33.

2. Grothey A. EGFR antibodies in colorectal cancer: where do they belong? J Clin Oncol. 2010;28:4668–4670. doi 10.1200/JCO.2010.29.3407.

3. De Roock W, Claes B, Bernasconi D, et al. Effects of KRAS, BRAF, NRAS, and PIK3CA mutations on the efficacy of cetuximab plus chemotherapy in chemotherapy-refractory metastatic colorectal cancer: a retrospective consortium analysis. Lancet Oncol. 2010;11:753–762. doi 10.1016/S1470-2045(10)70130-3.

4. De Roock W, De Vriendt V, Normanno N, et al. KRAS, BRAF, PIK3CA, and PTEN mutations: implications for targeted therapies in metastatic colorectal cancer. Lancet Oncol. 2011;12:594–603. doi 10.1016/S1470-2045(10)70209-6.

5. Rubenstein JH, Enns R, Heidelbaugh J, et al. American Gastroenterological Association Institute guideline on the diagnosis and management of Lynch syndrome. Gastroenterology. 2015;149:777–782. doi10.1053/j.gastro. 2015.07.036.

6. Des Guetz G, Schischmanoff O, Nicolas P, et al. Does microsatellite instability predict the efficacy of adjuvant chemotherapy in colorectal cancer? A systematic review with meta-analysis. Eur J Cancer. 2009;45:1890–1896. doi 10. 1016/j.ejca.2009.04.018.

7. Guastadisegni C, Colafranceschi M, Ottini L, et al. Microsatellite instability as a marker of prognosis and response to therapy: a meta-analysis of colorectal cancer survival data. Eur J Cancer. 2010;46:2788–2798. doi 10.1016/j.ejca.2010. 05.009.

8. Gavin PG, Colangelo LH, Fumagalli D, et al. Mutation profiling and microsatellite instability in stage II and III colon cancer: an assessment of their prognostic and oxaliplatin predictive value. Clin Cancer Res. 2012;18:6531– 6541. doi 10.1158/1078-0432.CCR-12-0605.

9. Institute of Medicine. Clinical Practice Guidelines We Can Trust. Washington, DC: National Academies Press; 2011.

10. National Health and Medical Research Council. A guide to the development, implementation and evaluation of clinicl practice guidelines. 1999.

https://www.nhmrc.gov.au/_files_nhmrc/publications/attachments/cp.30. pdf. Accessed March 23, 2016.

11. Guyatt GH, Oxman AD, Vist GE, et al; GRADE Working Group. GRADE: an emerging consensus on rating quality of evidence and strength of recommendations. BMJ. 2008;336:924–926. doi 10.1136/bmj.39489.470347.

12. Sorich MJ, Wiese MD, Rowland A, et al. Extended RAS mutations and anti-EGFR monoclonal antibody survival benefit in metastatic colorectal cancer: a meta-analysis of randomized, controlled trials. Ann Oncol. 2015;26:13–21. Doi 10.1093/annonc/mdu378.

13. Ibrahim EM, Abouelkhair KM. Clinical outcome of panitumumab for metastatic colorectal cancer with wild-type KRAS status: a meta-analysis of randomized clinical trials. Med Oncol. 2011;28(suppl 1):S310–S317. doi 10. 1007/s12032-010-9760-4.

14. Modest DP, Brodowicz T, Stintzing S, et al. Impact of the specific mutation in KRAS codon 12 mutated tumors on treatment efficacy in patients with metastatic colorectal cancer receiving cetuximab-based first-line therapy: a pooled analysis of three trials. Oncology. 2012;83:241–247. doi 10.1159/ 000339534.

15. Petrelli F, Borgonovo K, Cabiddu M, et al. Cetuximab and panitumumab in KRAS wild-type colorectal cancer: a meta-analysis. Int J Colorectal Dis. 2011; 26:823–833. doi 10.1007/s00384-011-1149-0.

16. Zhou SW, Huang YY, Wei Y, et al. No survival benefit from adding cetuximab or panitumumab to oxaliplatin-based chemotherapy in the first-line treatment of metastatic colorectal cancer in KRAS wild type patients: a metaanalysis. PLoS One. 2012;7:e50925. doi 10.1371/journal.pone.0050925.

17. Karapetis CS, Khambata-Ford S, Jonker DJ, et al. K-ras mutations and benefit from cetuximab in advanced colorectal cancer. N Engl J Med. 2008;359: 1757–1765. doi 10.1056/NEJMoa0804385.

18. Adelstein BA, Dobbins TA, Harris CA, et al. A systematic review and meta-analysis of KRAS status as the determinant of response to anti-EGFR antibodies and the impact of

partner chemotherapy in metastatic colorectal cancer. Eur J Cancer. 2011;47:1343–1354. doi 10.1016/j.ejca.2011.03.031.

19. Allegra CJ, Jessup JM, Somerfield MR, et al. American Society of Clinical Oncology provisional clinical opinion: testing for KRAS gene mutations in patients with metastatic colorectal carcinoma to predict response to antiepidermal growth factor receptor monoclonal antibody therapy. J Clin Oncol. 2009;27:2091–2096. doi 10.1200/JCO.2009.21.9170.

20. Baas JM, Krens LL, Guchelaar HJ, et al. Concordance of predictive markers for EGFR inhibitors in primary tumors and metastases in colorectal cancer: a review. Oncologist. 2011;16:1239–1249. doi 10.1634/theoncologist. 2011-0024.

21. Chen J, Ye Y, Sun H, et al. Association between KRAS codon 13 mutations and clinical response to anti-EGFR treatment in patients with metastatic colorectal cancer: results from a meta-analysis. Cancer Chemother Pharmacol. 2013;71:265–272. doi 10.1007/s00280-012-2005-9.

22. Dahabreh IJ, Terasawa T, Castaldi PJ, et al. Systematic review: antiepidermal growth factor receptor treatment effect modification by KRAS mutations in advanced colorectal cancer. Ann Intern Med. 2011;154:37–49. doi 10.7326/0003-4819-154-1-201101040-00006.

